

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Սյունիքի տարածաշրջանային մասնաճյուղ

The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբեր

2022թ.

31.10.2022

Ֆրանսիացի պատգամավորները Գորիսում

✔ Շնչկոտեմբերի 29-ին Սյունիքի մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանն ու մարզպետի օգնական Սուրեն Քեսեջյանը Գորիսում հանդիպել են Սյունիք ժամանած՝ Ֆրանսիայի խորհրդարանի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի պատվիրակության անդամներին: Հանդիպմանը մասնակցել է նաև Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը:

💬 Պատվիրակության այցի նպատակն էր տեղում ծանոթանալ մարզում ստեղծված կացության մանրամասներին:

💬 Մարզային իշխանության ներկայացուցիչները ֆրանսիացի պատգամավորներին են ներկայացրել սեպտեմբերյան ադրբեջանական ռազմական ագրեսիայից հետո Սյունիքում առկա իրավիճակն ու դրա հետեւանքով առաջ եկած խնդիրները՝ անվտանգային, տնտեսական եւ այլն:

💬 Մարզպետի տեղակալը շնորհակալություն է հայտնել հյուրերին՝ Սյունիքի հանդեպ հետաքրքրվածության ու խնդիրներին արձագանքելու համար:

💬 Ֆրանսիացի պատգամավորները նշել են, որ իրենք խորհրդարանում ներգրավված են հայկական հարցերի մասին բարձրաձայնելու գործընթացներում եւ վերջին ագրեսիայից հետո նպատակ ունեն այս հարցում ակտիվացնել ֆրանսիական ու միջազգային հանրությանը՝ տեղ հասցնելով Հայաստանի շուրջ կատարվողի մասին իրականությունը:

💬 Ն. Ղազարյանն ու Ս.Քեսեջյանը պատվիրակության անդամներին ուղեկցել են նաև ռազմական գործողություններից տուժած Վերիշեն ու Վաղատուր գյուղեր, որտեղ նրանք տեղում ծանոթացել են ագրեսիայի հետեւանքներին:

Աղբյուրը՝

<https://www.facebook.com/syunikregionaladministration/posts/pfbid0oYics8JnwS9LDaC7vq8tVxeeu19QeDxw4tFMjNVEmz54nMEYTXAsqoWTfFpeC3FWl>

29.10.2022 թ.

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն այսօր աշխատանքային այցով Սյունիքի մարզում էր

Աննա Վարդապետյանը խորհրդակցություն է անցկացրել Կապան համայնքում գտնվող՝ Սյունիքի մարզի դատախազությունում, որին մասնակցել են Սյունիքի մարզպետ

Ռոբերտ Ղուկասյանը, մարզի իրավապահ կառույցների ղեկավարները, մարզի դատախազն ու դատախազության դատախազները, ինչպես նաև Գորիսի կայագործի զինվորական դատախազը:

Ողջունելով ներկաներին՝ գլխավոր դատախազը նշել է, որ մարզային առաջին այցով Սյունիքում լինելը պատահական չէ: «Երկրի պաշտպանության կարևոր սահմաններից մեկն այստեղ է. այստեղից է սկսվում նաև քրեական քաղաքականության առաջնագիծը», - նշել է գլխավոր դատախազը:

Աննա Վարդապետյանի խոսքով՝ մարզի Դատախազությունն այն առաջնային օղակն է, որի հետ առնչվում է քաղաքացին: «Ես հավատում եմ, որ մեր քաղաքացին գալու է Դատախազություն՝ իր իրավունքների պաշտպանությունը ստանալու համար, գալու է, որովհետև հավատում է, որ այստեղ պատշաճ իրավական գնահատական կտրվի իր իրավունքը խախտողի արարքին», - ընդգծել է գլխավոր դատախազ Վարդապետյանը և հավելել, որ այս համատեքստում կարևորում է քրեական վարույթների քննության ժամկետների պահպանումը, որովհետև քրեական գործերով ձգձգումները կործանիչ ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսության և մարզի կյանքի որակի վրա:

Աննա Վարդապետյանը շեշտել է, որ իր ուղիղ ուշադրության կենտրոնում են լինելու նաև մինչդատական վարույթում ութ ամսից ավելի քննվող քրեական վարույթները և հանձնարարել է սահմանել ու Գլխավոր դատախազություն ներկայացնել այդ վարույթների քննության ժամանակացույցը: «Ինձ հետաքրքիր չեն գործերի թվերը, ինձ հետաքրքիր է գործերի որակը», - նշել է գլխավոր դատախազն ու այս համատեքստում կարևորել նաև զինվորական քրեական վարույթների քննության արդյունավետության բարձրացումը՝ շեշտելով, որ իր անմիջական ուշադրության կենտրոնում են զինվորական հանցագործություններն ու ոչ մարտական պայմաններում գրանցված մահերի քննությունները:

Անդրադառնալով մարզային իրավապահ բոլոր օղակների փոխգործակցության արդյունավետության բարձրացմանը՝ Աննա Վարդապետյանը վստահություն է հայտնել, որ և՛ մարդկային, և՛ մասնագիտական որակներն ու ամենակարևորը՝ հայրենասիրությունը, թույլ կտան մի կողմ դնել ներանձնային հնարավոր խոչընդոտները ու միմյանց հետ աշխատել հանուն Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքների ու պետական շահերի պաշտպանության:

Սյունիքի մարզպետը կարևորել է ՀՀ գլխավոր դատախազի՝ Սյունիքի մարզ կատարած այցն ու ոլորտային հրատապ խնդիրները լուծելու նպատակով ցուցաբերվող աջակցությունը: Ռոբերտ Ղուկասյանը նաև շնորհակալություն է հայտնել Դատախազությանը՝ արդյունավետ համագործակցության և մարզում կայունությունն ապահովելու հարցում ներդրած ջանքերի համար:

Սյունիքի մարզի դատախազ Մասիս Պողոսյանն իր խոսքում ներկայացրել է կատարված աշխատանքն ու առկա խնդիրները:

Խորհրդակցության ընթացքում, ի թիվս այլ հարցերի, հանգամանալից անդրադարձ է կատարվել նաև ութ ամսից ավելի քննվող քրեական վարույթների խնդիրներին ու իրավապահ մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը վերաբերող հարցերի մանրամասներին:

Քննարկված բոլոր ուղղություններով ՀՀ գլխավոր դատախազը տվել է հանձնարարականներ, սահմանել ժամկետներ:

Աղբյուրը՝ https://www.prosecutor.am/am/mn/8773/?fbclid=IwAR3VhOYU_zLtTtG87alhjVB_UrnFb100_1Agggc543Rg2ozVeSFY1odbSE

29.10.2022 թ.

«ՍՅՈՒՆԻՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՕԶԱԽ» ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԳՈՐԻՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 55-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 27-ին Գորիսի պետական համալսարանում մեկնարկեց բուհի 55-ամյակին նվիրված «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ» խորագրով երկօրյա հանրապետական գիտաժողովը, որին մասնակացում էին ՀՀ-ի, ԱՀ-ի և արտերկրի շուրջ 25 գիտակրթական կազմակերպությունների, այդ թվում՝ Երևանի պետական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Շիրակի պետական համալսարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Վանաձորի պետական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, Մ.Աբեղյանի անվան գրականության, Հ.Աճառյանի անվան լեզվի, պատմության, արվեստի ինստիտուտների,

Շվեյցարիայի Ֆրիբուրգի համալսարանի, Հայաստանի ազգագրության թանգարանի, Սանկտ Պետերբուրգի Պ.Լեսգաֆտի անվան ազգային պետական համալսարանի, Արցախի Մեսրոպ Մաշտոց համալսարանի և այլ գիտակրթական կառույցների շուրջ 60 գիտնականներ, մասնագետներ ու հետազոտողներ: Գիտաժողովի աշխատանքներում ներգրավված էր նաև ԳՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմը:

Գիտաժողովի նպատակն էր գիտատեսական քննարկումների բազմակողմ հարթակ բերել Սյունիքի ոչ միայն հայագիտական ու հասարակագիտական ողջ լայնույթի հիմնահարցերը, այլև առհասարակ մատնանշելու Սյունիքի մարզում տարբեր գիտաճյուղերի նպատակադիր զարգացման թիրախները, գերակայություններն ու անելիքները:

Գիտաժողովի բացման արարողությանն ու լիագումար նիստին ներկա էին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Արցախի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը, Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը, Արցախի պետական համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ, պաշտոնատար այլ անձինք:

Գիտաժողովը մեկնարկեց Գորիսի հոգևոր հովիվ Տեր Տիգրան քահանա Հակոբյանի օրհնության խոսքով և տերունական աղոթքով:

Այնուհետև ԳՊՀ ռեկտոր Տիգրան Վանդունցը, բացման խոսքում ողջունելով ներկաներին, շնորհավորեց Գորիսի պետական համալսարանի հիմնադրման 55-ամյա հոբելյանի առթիվ՝ այն համարելով գիտակրթական ասպարեզում բուհի ձեռքբերումների ամփոփման ու արժևորման հրաշալի հնարավորություն: Խոսելով գիտաժողովի օրակարգի, թեմատիկ բազմազանության, գիտագործնական նշանակության ու առաքելության մասին՝ ռեկտորը հավելեց, որ գիտաժողովը յուրատեսակ հարթակ է՝ ոչ միայն հետադարձ հայացքով արժևորելու Սյունիքի պատմամշակութային բազմահարուստ ժառանգությունը, ամփոփելու գիտակրթական արժեքավոր ձեռքբերումները, այլև քննարկելու գիտության, կրթության և մշակույթի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները Սյունիքի մարզում: Նա շնորհակալություն հայտնեց գիտակրթական այն բոլոր կառույցներին, որոնց ներկայացուցչական կազմերը մասնակցում են գիտաժողովի աշխատանքներին՝ իրենց գիտական ներուժը ներդնելով Սյունիքի հայագիտական ողջ լայնույթի հիմնահարցերի ուսումնասիրման, ինչպես նաև տարբեր գիտաճյուղերի նպատակադիր զարգացման գործում: «Մասնակիցների որակյալ կազմը, զեկուցումների թեմատիկ շրջանակը հրաշալի նախադրյալներ են ստեղծում՝ մեկտեղելու հայագիտության, հասարակագիտության և

բնագիտության հիմնախնդիրներով զբաղվող գիտնականներին, լսելի ու քննարկելի դարձնելու գիտության մեջ նախաքայլեր անող հետազոտողների նորահայաց տեսակետները, ստեղծելու բարենպաստ մթնոլորտ՝ գաղափարների փոխանակման, գիտական երկխոսության ծավալման, տեղական ու արտասահմանյան գիտական հաստատությունների հետ համագործակցության ձևավորման համար: Նաև այսպիսի՝ միջոցառումների կազմակերպմամբ Գորիսի պետական համալսարանը կդառնա արդիական գիտական հիմնախնդիրների քննարկման տարածաշրջանային կենտրոն, ինչը մեր ռազմավարական նպատակներից է»,-նշեց ռեկտորը՝ համառոտ անդրադարձ կատարելով Գորիսի պետական համալսարանի անցած ուղուն, ձեռքբերումներին, կրթական գործի երախտավորներին:

Ողջույնի խոսք ասաց Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը: Նա շնորհակալություն հայտնեց բոլոր այն մարդկանց, որոնք ներդրում ունեն ԳՊՀ-ի հիմնադրման, կայացման ու զարգացման գործում: «Միակ տեսանկյունի կենտրոնը, որի շուրջ պետք է համախմբվենք, կրթությունն ու գիտությունն են: Այդ գործիքակազմով կարող ենք ունենալ իսկազգի, կրթված հասարակություն, որի անդամները երկրի համար կարևոր հարցերում նույն ուղղությամբ են մտածում: Շատ շնորհակալ եմ այս ծանր փուլում Սյունիքում նման գիտաժողով նախաձեռնելու և կազմակերպելու համար, այն պահանջված է ու կարևոր», – նշեց մարզպետը ու հավելեց, որ մարզային իշխանությունը մշտապես պատրաստակամ է աջակցել նման կարևոր միջոցառումների կազմակերպմանը:

ԳՊՀ-ի հոբելյանի և գիտաժողովի բացման առթիվ ներկաներին ողջունեց ԱՀ Արտաքին գործերի նախարար Դավիթ Բաբայանը՝ բարձր գնահատելով Գորիսի պետական համալսարանի դերը տարածաշրջանում և Արցախի հետ կապի ամրապնդման գործում: Վերջին տարիներին Սյունիքի և Արցախի միջև գիտակրթական կապերի ամրապնդման ու զարգացման գրավականներից մեկը պատմագիտության դոկտոր Դավիթ Բաբայանի հետ մասնագիտական արդյունավետ համագործակցությունն է: «Գիտությունը և կրթությունը մեր ժողովրդի և պետականության հարատևման, զարգացման և զորացման առանցքային հիմքերից են, իսկ Գորիսի պետական համալսարանը՝ կրթության և հայրենասեր դաստիարակության կարևոր մի կենտրոն: Առանձնակի նշանակություն ունի պրոֆեսիոնալ և հայրենանվեր կադրերի պատրաստումը հայոց պետականության և հայ ազգային ինքնության յուրահատուկ ԴՆԹ-ն հանդիսացող Արցախում և Սյունիքում»,–նշեց նախարարը և հաջող ընթացք մաղթեց գիտաժողովի աշխատանքներին:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը իր ողջույնի խոսքում կարևորելով երկու համալսարանների փոխգործակցության շարունակականությունը՝ բազմաթիվ կենսաշահ ծրագրերի իրականացման հեռանկարներով, մասնավորապես նշեց. «Մեծ է մեր երկու բուհերի համագործակցության դերն ու նշանակությունը ոչ միայն Արցախ-Սյունիք գիտակրթական փոխգործակցությունն ամուր պահելու, այլ նաև՝ մեր հայրենիքի առջև ծառայած խնդիրների լուծման համար ուղիներ նախանշելու տեսանկյունից: Պատմաքաղաքական արդի զարգացումների և հատկապես մեր հայրենիքի առջև ծառայած մարտահրավերների իրողություններում անչափ կարևորում եմ «Սյունիքը կրթության և մշակույթի օջախ» խորագրով գիտաժողովի կազմակերպումը, որը միտված է հանրապետության գիտության ոլորտի կարող ուժերի մեկտեղմանը՝ հանուն օրախնդիր հարցերի լուծման»: Արմեն Սարգսյանը ԳՊՀ-ի 55-ամյակի առթիվ համալսարանին հանձնեց խորհրդանշական հուշանվեր և նվիրեց բազմաքանակ արժեքավոր գրքեր:

Գորիսի պետական համալսարանի հոբելյանի առթիվ ուղերձներ էին հղել Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը:

Շնորհավորական ելույթներով հանդես եկան նաև «Սյունյաց երկիր» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Սամվել Ալեքսանյանը, Պետերբուրգի Լեսգաֆտի համալսարանի պրոֆեսոր, ԳՊՀ շրջանավարտ Քաջիկ Օհանյանը և ուրիշներ:

Լիազումար նիստին զեկուցումներով հանդես եկան պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը («Գորիս քաղաքի կրթական կյանքի պատմությունից (XIX դար-XX դարասկիզբ)»), պ.գ.թ., դոցենտ Համո Սուքիասյանը («ՀՄԽՆ Զանգեզուրի և ԱՄԽՆ Քուրդիստանի գավառների սահմանային վեճերը 1920-ական թվականներին»), ք.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Թորոսյանը («Աձխածին պարունակող թափոնների և մագութի վերամշակմամբ հեղուկ վառելիքի արտադրության տեխնոլոգիա»):

Լիազումար նիստից հետո գիտական նստաշրջանի երկօրյա աշխատանքը ծավալվեց հինգ մասնախմբերում՝ «Պատմություն, քաղաքագիտություն, իրավագիտություն», «Հնագիտություն, ազգագրություն, արվեստ», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Բանասիրական ուսումնասիրություններ», «Բնագիտական ուսումնասիրություններ»:

Օրակարգի թեմատիկ բազմազանությունը վկայում էր բովանդակային առումով խորքային ընդգրկում ունեցող նստաշրջանի գիտագործնական առաքելության մասին:

Հոկտեմբերի 28-ին տեղի ունեցավ գիտաժողովի փակման լիազումար նիստը:

ԳՊՀ ռեկտոր Տիգրան Վանդունցը շնորհակալություն հայտնեց երկօրյա արդյունավետ աշխատանքի համար և հույս հայտնեց, որ գիտաժողովին մասնակցած կազմակերպությունների և նրանց ներկայացուցիչների հետ մասնագիտական համագործակցությունը կլինի շարունակական:

Մասնախմբերի նախագահողները՝ Բ.Գ.Պ. Հայկանուշ Մեսրոպյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, պ.գ.թ., դոցենտ Համո Սուքիասյանը, տեխ.գ.դ., պրոֆեսոր Սուրեն Աղբալյանը, Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ.Եղիազարյանը, ք.գ.դ. Լուիզա Վարդանյանը, պ.գ.թ. Սվետլանա Պողոսյանը, մ.գ.թ., դոցենտ Էռնեստ Ավանեսովը, հաղորդումներ ներկայացրին մասնախմբային քննարկումների մասին: Կարևորելով նման թեմատիկայով գիտաժողովի կազմակերպումը՝ նրանք բարձր գնահատեցին այն թե՛ կազմակերպական մակարդակի և թե՛ գիտական որակի առումով: Սյունիքը ունակ է ապահովելու հետազոտությունների լայն թեմատիկա, ինչպես իր պատմամշակութային փոխառնչությունների աշխարհագրական շրջանակների (Հս. Կովկաս, Իրան, Արցախ, Սևանի ավազան, Արարատյան դաշտավայր-Նախիջևան և այլն), այնպես էլ քաղաքական պատմության բազմերանգության առումներով, հետևաբար գիտնականները հույս հայտնեցին, որ թեմատիկ ուղղվածությամբ նմանատիպ գիտաժողովների կազմակերպումը Սյունիքում կլինի շարունակական ու նպատակային:

Ելույթ ունեցավ նաև գիտաժողովի պատվավոր հյուր, Շվեյցարիայի Ֆրիբուրգի համալսարանի պրոֆեսոր, աստվածաբանական և փիլիսոփայական գիտությունների դոկտոր Աբել Մանուկյանը՝ շնորհակալություն հայտնելով գիտաժողովին մասնակցելու պարտավորեցնող հրավերի համար, ինչը հաստատապես հիմնաքար կդառնա՝ երկու համալսարանների միջև համագործակցային կապերի զարգացման և միջազգայնացման համար:

Ներկաներին իր շնորհակալական խոսքը հղեց նաև Հայաստանում Մայթայի Ինքնիշխան Ուխտի դեսպանության ժամանակավոր հավատարմատար Աշոտ Գալոյանը:

Ամփոփիչ խոսք ասաց նաև գիտաժողովի աշխատանքները համակարգող, ԳՊՀ գիտական քարտուղար Թեհմինա Մարությանը՝ շնորհակալություն հայտնելով մասնակիցներին Սյունիքի մայր բուհի, գիտաժողովի թեմատիկ ուղղվածության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության և մասնակցության համար՝ համոզմունք հայտնելով, որ գիտաժողովի նիստերում հնչած զեկուցումները կարևոր կովաններ են Սյունիքի հոգևոր ու նյութական հարուստ ժառանգության ուսումնասիրման, վերաարժևորման ու նորահաստատման գործում:

Գիտաժողովի շրջանակներում բացվեց նաև հոբեյանական ցուցահանդես, որում ներկայացված էին ինչպես սյունեցի հայտնի գեղանկարիչների գործերը, այնպես էլ ԳՊՀի “Կերպարվեստ” մասնագիտության շրջանավարտների և ուսանողների լավագույն գեղանկարները: ԳՊՀի հիմնադրման հիշարժան տարեթիվը նշանավորվեց ևս մեկ խորհրդանշական իրադարձությամբ: Վերջերս կյանքին հրաժեշտ տված քանդակագործ, գեղանկարիչ, ԳՊՀ երախտաշատ դասախոս Միխայել Ղուկասյանի զավակները Գուսան Աշոտին պատկերող հոր կոթողային կտավը նվիրաբերեցին համալսարանին՝ իրականացնելով գեղանկարչի ցանկությունը:

Գիտաժողովին մասնակցող գիտակրթական կազմակերպությունների և առանձին գիտնականների կողմից ԳՊՀն նվեր ստացավ մեծաքանակ արժեքավոր գրականություն:

Գիտաժողովի շրջանակներում իրականացվեցին պատմաճանաչողական շրջայցեր (Ակսել Բակունցի տուն-թանգարան, Տաթևի վանական համալիր):

Աղբյուրը՝ <https://bit.ly/3zOPzHr>

29.10.2022

Ամիսներ շարունակ իրականացվող հիմնանորոգման շնորհիվ Կապան-Աղվանի ճանապարհը դարձել է բարեկարգ ու բարեհարմար

Սյունիքի շուրջ ստեղծված ռազմաքաղաքական նոր իրավիճակում չափազանց մեծ նշանակություն է ձեռք բերել Տաթև-Կապան ճանապարհը: Մ2-ին (Գորիս-Կապան մայրուղուն) փոխարինած տրանսպորտային այդ զարկերակը 2021-ի աշնանից դարձել է հանրապետության ամենաճանրաբեռնված մայրուղիներից մեկը, եթե ոչ ամենաճանրաբեռնվածը:

Դիտարկելով ճանապարհով իրականացվող բուռն եւ դադարում չունեցող երթևեկությունը, հանգում ենք եզրակացության՝ առանց այդ զարկերակի կանոնավոր գործունեության հնարավոր չէ պատկերացնել հանրապետության բնականոն կյանքը:

Եվ որպեսզի մայրուղին լիովին համապատասխանի իր նշանակությանը՝ պետք էր հնարավորինս կարգավորել այն, ինչին եւ միտված են դեռևս երկու տարի առաջ մեկնարկած աշխատանքները:

Իհարկե, ճանապարհի ամեն մի հատված ունի իրեն բնորոշ առանձնահատկություններ, լուծումների յուրօրինակ տրամաբանություն, որոնց անդրադարձել ենք եւ շարունակում ենք անդրադառնալ...

Մայրուղու կարելու հատվածներից մեկը, անշուշտ, Տաթև-Աղվանի ճանապարհն է, որտեղ իրականացվող աշխատանքներին ծանոթացանք հոկտեմբերի 19-ին:

Տաթև-Աղվանի ճանապարհի կառուցումն ունի իր նախապատմությունը...

Հաղորդակցության այդ ուղին գոյություն է ունեցել հնուց ի վեր, խորհրդային տարիներին էլ շատ թե քիչ բարեկարգվել է: Հատկապես Տաթևի ենթաշրջանի գյուղերի բնակիչները, որոնք ավանդաբար սերտ կապ են ունեցել եւ ունեն Կապանի տարածաշրջանի հետ, հենց այդ ճանապարհով էին այցելում Կապան ու մերձակա գյուղեր:

12,5 կմ երկարությամբ ճանապարհի վերականգնումը սկսվեց դեռեւս 2019 թվականին: Մեկ տարի անց արդեն ունեինք շատ թե քիչ ամբողջական, բայց ոչ ավարտուն վիճակ: Կատարվել էր հսկայածավալ հողային աշխատանք, կառուցվել էին մեծ թվով ենթակառուցվածքներ...

Հասկանալի պատճառով 2020-ի աշնանն ընդհատված աշխատանքները վերսկսվեցին 2021-ի մայիսին եւ, նախագծին համապատասխան, ավարտին հասցվեցին նույն տարվա աշնանը, սակայն...

Սողանքային գոտիները, որոնց թիվն անցնում է 30-ից (բնական այդպիսի խոչընդոտներ մարզում կառուցվող ճանապարհներից ոչ մեկը չունի), ի սկզբանե չնախատեսված ծանրաբեռնվածությունը եւ դրան համահունչ նախագծային լուծումների բացակայությունը, չկառավարվող ջրային հոսքերը ժամանակի ընթացքում նորանոր խնդիրներ առաջացրին: Եվ ընթացիկ տարվա սկզբին ճանապարհը վերանորոգելու, որոշ տեղերում՝ նախագծային փոփոխություններ կատարելու եւ դրա հիման վրա վերակառուցումներ իրականացնելու պահանջ առաջացավ, ինչի ուղղությամբ ամիսներ առաջ սկսեցին աշխատանքները:

Աշխատանքներն իրականացրել եւ իրականացնում է «Բիլդեր Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունը (հիմնադիր նախագահ՝ Ղուկաս Գրիգորյան). մինչ 2021-ի փետրվար ընկերությունը կոչվում էր «Վահագն եւ Սամվել» ՍՊԸ:

Մ2-Տաթև-Աղվանի 12,5 կմ երկարությամբ ճանապարհին (25+000 կմ-37,500 կմ), մեր այցելության օրը, միանգամայն նոր իրավիճակի ականատես դարձանք:

Շինարարներին հանդիպեցինք Տաթևից սկսած 28-րդ կիլոմետրի հատվածում:

Նախօրեին անձրեւ էր տեղացել. շինարարները սպասում էին՝ ճանապարհը չորանա, որպեսզի ասֆալտի երրորդ շերտը տեղադրեն: Իսկ մինչ այդ բիտում էին փռել ասֆալտին: Երկրորդ շերտի վրա, ինչպես տեսանք, նաեւ «Գեոգրիտ» կոչվող ոչ մետաղյա ցանց էր

փռվում, ինչի վրա էլ այնուհետև (ճանապարհը չորանալուց հետո) տեղադրվում է երրորդ շերտը:

Շինաշխատանքերը ղեկավարում է Էդգար Ստեփանյանը՝ մասնագիտությամբ երկրաբան, նաև լեռնային ինժեներ, հինգ տարի է՝ ճանապարհաշինության ոլորտում է:

-Նախկինում, երբ սկսեցինք մեզ վերապահված հատվածի հիմնանորոգումը, Տաթև-Կապան ավտոճանապարհի ինտենսիվությունը նվազ է եղել, նախագիծը կազմվել էր տվյալ ինտենսիվության համար: Մ2 (Գորիս-Կապան) ճանապարհն աղբբեջանցիների կողմից շրջափակվելուց հետո կտրուկ բարձրացել է երթևեկության ինտենսիվությունը Կապան-Տաթև-Շինուհայր ավտոճանապարհով, ընդ որում՝ երթևեկում են գերձանրաբեռնված բեռնատարներ: Ճանապարհը 100 կիլոնյուտոն կրողականություն պիտի ունենա, ուստի նոր նախագծով ասֆալտի երրորդ շերտը տեղադրելիս, որ պիտի ունենա հինգ սանտիմետր հաստություն, օգտագործվում է «Գեոգրիտ», ինչը բարձրացնում է ճանապարհի կրողականությունը, - բացատրում է Էդգար Ստեփանյանը:

Հետաքրքրվում ենք, թե որտեղից են ստանում ասֆալտբետոնը: Պարզվում է՝ «Ապառաժ» ՍՊ ընկերության ասֆալտգործարանից, որ Կապանի նախկին երկաթբետոնե կառուցվածքների գործարանի տարածքում է: Գոհ են այդտեղից մատակարարվող ասֆալտբետոնի որակից:

Մեր այցելության օրը Տաթև-Աղվանի ճանապարհահատվածի շինարարությունում 30-ից ավելի մարդ էր աշխատում, գործում էր 15-ից ավելի ճանապարհաշինական արդիական տեխնիկա: Մեր զրուցակցի փոխանցմամբ՝ ձգտում են շինարարության մեջ առավելությունը տալ տեղացի ուժերին, բայց կարծես թե մարդիկ հակված չեն բանվորություն անել շինարարությունում:

Դրսեկ շինարարների էլ ենք հանդիպում: Կարեն և Վիգեն Հովհաննիսյան եղբայրներն Արմավիրի մարզի Այգևան գյուղից են: 11 տարի ճանապարհաշինությամբ են զբաղվել Ռուսաստանի Դաշնությունում: Երեք տարի է՝ «Բիլդեր Քոնսթրաքշն» ընկերությունում են, վերջին երկու ամսում՝ Սյունիքի մարզում՝ Տաթև-Աղվանի ճանապարհը հիմնանորոգող շինարարների խմբում:

«Մեր հայրենիքում ենք ճանապարհ կառուցում, ինչը մեզ շատ է ոգևորում: Նաև սարերի վրա ենք աշխատում, ում կտան նման հիասքանչ բնությունը, Ռուսաստանում միայն հարթ տարածություններ են, աչքի համար ոչ մի հաճելի բան», - ասում է Վիգենը: Մեր զրույցը կարճ է

տևում, երևում է՝ գրուցակիցն ավելի շատ գործի մարդ է, շտապում է միանալ ասֆալտ տեղադրողներին:

Իսկ մի քանի հարյուր մետր հեռու աշխատում են հայր ու որդիներ Ավետ, Մերգելոս և Սևան Սկոյանները՝ նույնպես Արմավիրի մարզից: Ցեմենտի շաղախ են պատրաստում, որ ամրացնեն մետաղե խողովակի մուտքը: Ի դեպ, ջրահեռացմանն այդտեղ մեծ ուշադրություն է դարձվում: Մանավանդ Տաթևի վանքի մոտ՝ գյուղից հոսող գրունտային ջրերը շատ են, հետագայում կարող է խնդիրներ առաջացնեն, ինչպես որ առաջացրել են մինչևի հիմա: Դրա նախանշանները լրագրողներին համար էլ տեսանելի է: **«Դրենաժ ենք կառուցելու, լուծումը գտել ենք, երկաթե խողովակներով է հեռացվելու ջուրը»**, - բացատրում է Էդգար Ստեփանյանը, նաև հավելում, որ նոր նախագծով մեծ տեղ է հատկացված կողային առուների անցկացմանը:

Մեր այցելության օրը զգացվում էր, որ մեծ աշխատանք է կատարված կողնակների (обочина) կառուցման գործում: Սա ևս շատ կարևոր է, քանզի ասֆալտը եզրերից է փշրվում, այն էլ՝ գերբեռնված մեքենաների անիվներից:

Իսկ ի՞նչն է խանգարում գործին: **«Ճանապարհով ինտենսիվ երթևեկությունը»**, - փոխանցում է Էդգար Ստեփանյանը: Մենք էլ ականատես եղանք, թե ինչպես են շինարարները փակում ճանապարհը, որպեսզի իրենց գործն առաջ տանեն: Մնում է իրականացնել երեք կիլոմետր ասֆալտապատում. լիահույս են՝ կտեղավորվեն նախանշված ժամկետում, եթե անակնկալներ չմատուցի աշնանային եղանակը:

Ինչևէ, ճանապարհահատվածի շինարարության ավարտ է սահմանված նոյեմբերի վերջը, և ճանապարհաշինարարները համոզմունք հայտնեցին, որ կհասցնեն ավարտել ոչ միայն ճանապարհի ասֆալտապատումը, այլև կահավորումն ու գծանշումը:

...Հետդարձի ճանապարհը շատ բարենորոգ է թվում, նաև ականա հիշում ենք երիտասարդ, բայց արդեն փորձառու ճանապարհաշինարարի խոսքը՝ մեզ համար ու մեր երկրի համար ենք կառուցում...

Հ.Գ.

Մենք, լինելով ոչ մասնագետ, չենք հավակնում բանավիճել ո՛չ շինարարի եւ ո՛չ էլ նախագծողների հետ: Սակայն տարածաշրջանի գլխավոր մայրուղու շահագործման փորձը ցույց է տալիս, որ ասֆալտբետոնի երկրորդ շերտի ճաքերի վեր բարձրացումը կասեցնելուն կոչված «Գեոգրիս»-ը, վերջին հաշվով, չի կարող կանխել այն բացասական հետեւանքները, որ ծանրաքաջ բեռնատարների երթևեկությունից ունենում են ասֆալտապատված ճանապարհները: Այնպես որ՝ գերծանրաբեռնվածությունը, ըստ փորձառու մասնագետների,

շարունակելու է հետագայում նույնպես մտահոգիչ հետեւանքներ ունենալ, ինչը պետք է մտածելու տեղիք տա հատկապես նախագծողներին:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/amisner-sharunak-irakanatsvokh-himnanorogman-shnorhiv-kapan-akhvani-chanaparhy-dardzel-e-barekarg-u-bareharmar>

24.10.2022 թ.

ԵԱՀԿ կարիքների գնահատման խումբն այցելել է Սյունիքի մարզ

ԵԱՀԿ կարիքների գնահատման խումբը երեկ այցելել է Սյունիքի մարզ, հանդիպել մարզպետարանի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում ԵԱՀԿ պատվիրակությանը ներկայացվել են սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի հանդեպ իրականացված վերջին ագրեսիայի հետևանքները, ասված է Սյունիքի մարզպետարանի հաղորդագրությունում:

ԵԱՀԿ ներկայացուցիչներն այցելել են նաև սահմանամերձ բնակավայր՝ տեղում ծանոթանալու իրավիճակին:

ԵԱՀԿ առաքելությանը Հայաստանում է ԵԱՀԿ-ում նախագահող Լեհաստանի ներկայացուցիչ գնդապետ Ռոբերտ Արկադիուշ Տկաչիկի գլխավորությամբ՝ պաշտոնական [Երևանի հրավերով](#):

Աղբյուրը՝ <https://www.azatutyun.am/a/32097729.html>

22.10.2022 թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԸ ԳՈՐԻՄԻ ՔՈՒՅՐ ՔԱՂԱՔ ՎԻԵՆՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ

ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Ֆրանսիա աշխատանքային այցի ընթացքում հոկտեմբերի 21-ին եղել է Գորիսի քույր քաղաք Վիենում:

Մարզպետը հանդիպում է ունեցել Վիենի քաղաքապետ Թիերի Կովակսի հետ, շնորհակալություն հայտնել քաղաքային իշխանություններին Գորիս քաղաքում իրականացրած ծրագրերի, կատարած աշխատանքի ու արդյունավետ համագործակցության համար:

Մարզպետն ու քաղաքապետը կարելուրել են հետագա համագործակցության խորացումն ու ընդլայնումը՝ մասնավորապես առողջապահության եւ զբոսաշրջության բնագավառներում:

Վիենի քաղաքապետ Թիերի Կովակսի եւ փոխքաղաքապետ Լեոն Սաքունցի ուղեկցությամբ Սյունիքի մարզպետը նաեւ շրջայց է կատարել քաղաքում:

Վիեն այցի ընթացքում Ռոբերտ Ղուկասյանին ուղեկցում էին Ֆրանսիայում ՀՀ գլխավոր հյուպատոսության խորհրդական Լեոն Դավթյանն ու մարզպետի օգնական Սուրեն Քեսեջյանը:

21.10.2022 թ.

Կապանում բացվեց Իրանի գլխավոր հյուպատոսությունը

Հոկտեմբերի 21-ին Կապանի Շահումյան փողոցի 34/4/1 հասցեում բացվեց Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսությունը:

Նշանակալի իրադարձության առթիվ մարզկենտրոն էին ժամանել Հայաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանը և Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը, Ազգային ժողովի պատգամավորներ և պաշտոնատար այլ անձինք, լրագրողներ:

Բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին աղուհացով, հնչեցին երկու երկրների օրհներգերը:

Այնուհետև երկու երկրների արտգործնախարարները հանդես եկան օրվա խորհրդին պատշաճող խոսքերով:

Արարատ Միրզոյանը նշեց. «Օրը նշանակալից է հայ-իրանական բազմադարյան բարիդրացիական հարաբերությունների պատմության մեջ: Վստահաբար կարող եմ նշել, որ Իրանի գլխավոր հյուպատոսության հիմնումը և արդյունավետ գործունեությունը նոր որակ կհաղորդեն երկու երկրների առանձնահատուկ հարաբերություններին, կխթանեն երկկողմ փոխգործակցությանը, կնպաստեն հայ-իրանական կապերի զարգացմանը:

Հասկանալի է, որ այս կարևոր իրադարձությունը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-րդ տարում:

Անցած 30 տարում մեր ուղին նշանավորվել է ռազմավարական բնույթ ունեցող հարաբերություններով: Վստահ եմ՝ հետագայում ևս կներդրվեն անհրաժեշտ ջանքեր՝ ապագա փոխշահավետ գործակցությունն ավելի խորացնելու և ամրապնդելու համար»:

Այնուհետև Ա. Միրզոյանն իրանական կողմին հավաստիացրեց, որ Հայաստանում խորապես ընկալում և բարձր են գնահատում մեր երկրի ողնաշարը հանդիսացող այս հատվածում՝ Սյունիքի մարզում հյուպատոսություն բացելու Իրանի իշխանությունների որոշումը: Նաև հայտնեց հայկական կողմի մտադրությունը՝ Թավրիզում հյուպատոսություն բացելու վերաբերյալ:

Իրանի արտգործնախարարը նախ իրազեկեց, որ հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին Իրանի պրոֆեսիոնալ դիվանագետներից է և վստահություն հայտնեց, որ Կապանում հյուպատոսության աշխատակիցները պարտականությունները կատարելիս կունենան Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության, ՀՀ-ում Իրանի դեսպանության, ՀՀ կառավարության, Սյունիքի մարզի և Կապան քաղաքի ղեկավարության աջակցությունը և, իհարկե, տեղի բնակչության բարեհաճ վերաբերմունքը:

Պաշտոնական արարողությունից հետո բարձրաստիճան դիվանագետները, հանդիսության մասնակից հյուրերը մտան հյուպատոսության շենք:

Լրագրողների հետ կարճ ժամանակով շփվելուց հետո երկու երկրների արտգործնախարարներն առանձնազրույց ունեցան:

Հյուրերին ճանապարհելուց հետո նորանշանակ հյուպատոսը պատասխանեց լրագրողների հարցերին:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/kapanum-batsvets-irani-glkhavor-hyupatosutyuny>

21.10.2022 թ.

ԵՐԵՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԱԶԱՐ ԵՎՐՈ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը աշխատանքային այցով գտնվում է Ֆրանսիայի Հանրապետությունում: Ֆրանսիայի Օվերն Ռոն Ալպ նահանգի շրջանային խորհուրդն այսօր լիազումար նիստի ընթացքում կայացած քվեարկությամբ հաստատել է Սյունիքի մարզին 300 000 եվրո հատկացնելու նախագիծը:

Տարածաշրջանային մոբիլիզացիոն ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանին Ադրբեջանի կողմից ագրեսիայի ենթարկվելուց հետո, ինչպես նաև ակտիվացնել համագործակցությունը Սյունիքի ռազմավարական մարզի հետ:

Քվեարկությանը ներկա է եղել նաև Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը:

Աղբյուրը՝ <http://syunik.mtad.am/news/item/2022/10/21/Lion/>

21.10.2022 թ.

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՈՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՕՎԵՐՆՅ ՌՈՆ ԱԼՊԻ ՄԻՋԵՎ

Հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի Օվերնյ Ռոն Ալպ ռեգիոնի շրջանային խորհրդում ռեգիոնի նախագահ Լորան Վոքիեն, Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Հասմիկ Տոլմաջյանը և Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը հանդես եկան համատեղ մամուլի հայտարարությամբ՝ ս.թ. սեպտեմբերի 13-14-ը ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ Ադրբեջանի լայնածավալ ագրեսիայի և դրա հետևանքների, Օվերնյ Ռոն Ալպ ռեգիոնի և Հայաստանի միջև ձևավորված արդյունավետ համագործակցության, ինչպես նաև ռեգիոնի և Սյունիքի մարզի միջև գործընկերության հաստատման մտադրության վերաբերյալ:

Իր խոսքում դեսպան Տոլմաջյանը բարձր գնահատեց նախագահ Վոքիեի՝ ադրբեջանական մշտական սպառնալիքների տակ գտնվող Սյունիքի հետ գործընկերության հաստատման հանձնառությունը:

Իբրև միջոցառման արդյունք՝ ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը և Օվերնյ Ռոն Ալպ ռեգիոնի նախագահ Լորան Վոքիեն, Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Հասմիկ Տոլմաջյանի ներկայությամբ, ստորագրեցին հայտարարություն «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի և Ֆրանսիական Հանրապետության Օվերնյ Ռոն Ալպ ռեգիոնի միջև գործընկերության մտադրության մասին»:

20.10.2022 թ.

ՍՅՈՒՆԻՔՈՒՄ ԷՐ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերի 20-ին Սյունիք է այցելել Եվրամիության տեխնիկական գնահատման առաքելության պատվիրակությունը:

Նրա անդամներին մարզկենտրոնում դիմավորել են Սյունիքի մարզպետի տեղակալներ Հայկ Հարությունյանն ու Նարե Ղազարյանը:

Մարզպետարանում կայացած հանդիպման ընթացքում, որին մասնակցել են նաև Հատուկ բանակային կորպուսի հրամանատար գեներալ-մայոր Արտակ Բուդաղյանը, ՀՀ ԶՈՒ և ԱԱԾ սահմանապահ զորքերի ներկայացուցիչներ, պատվիրակության ղեկավարը,

շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, շեշտեց, որ այս առաքելության խնդիրն է նախապատրաստել ԵՄ քաղաքացիական դիտորդների երկու ամսով տեղակայումը Սյունիքում, հետևել երկու կողմից հրադադարի ռեժիմի պահպանմանը և այս մասին պարբերաբար հրապարակել զեկույցներ:

Այս ամենն առավելագույն արդյունավետությամբ կազմակերպելու համար, ըստ պատվիրակության անդամների, անհրաժեշտ է տվյալ գործընթացում ներգրավել տեղի դերակատարներին ու նրանց հետ անմիջական համագործակցությունը:

Սյունիքի մարզային իշխանության և ուժային կառույցների ներկայացուցիչները շեշտեցին, որ պատրաստ են ամեն հարցում աջակցել պատվիրակության աշխատանքներին:

Հյուրերին ներկայացվեցին տեղեկություններ ադրբեջանական լայնածավալ ռազմական ագրեսիայի հետևանքով մարզի տուժած բնակավայրերի մասին և հատկապես ընդգծվեց, որ Սյունիքի սահմանների երկայնքով Ադրբեջանը գործում է ոչ միայն ընդդեմ հայկական զինված ուժերի, այլև՝ խաղաղ բնակչության:

Փոխմարզպետ Հայկ Հարությունյանի խոսքով՝ Սյունիքում սահմանամերձ բնակավայրերը ադրբեջանական զինվորների կողմից անմիջական սպառնալիքի տակ են, և այդ տեղերում խախտվում է ոչ միայն բնակիչների խաղաղ ապրելու իրավունքը, այլև երեխաների մեջ ի հայտ են գալիս ծանր հոգեբանական խնդիրներ:

Ըստ պատվիրակությանը փոխանցված տվյալների՝ սեպտեմբերի 13-ից Ադրբեջանի սանձազերծած ռազմական լայնածավալ ագրեսիայի հետևանքով (ընդ որում, ռազմական գործողությունները տեղի են ունեցել ՀՀ սուվերեն տարածքում) տուժել է մարզի 6 բնակավայր, վնասվել՝ 18 բնակելի տուն, վարչական շենքեր, քաղաքացիների մեքենաներ, գյուղատնտեսական տեխնիկա ու կազմակերպությունների շինտեխնիկա, թշնամուն են անցել հազարավոր փոքր եղջերավոր անասուններ: Շեշտվեց, որ մարզում արձանագրվել է երկու խաղաղ բնակչի մահ, որոնք զոհվել են՝ բավականին հեռու լինելով սահմանագծից, իսկ քաղաքացիական շտապօգնության մեքենաների տեղաշարժը հակառակորդի զինված ուժերը արգելափակել են հրետակոծություններով՝ չթողնելով օգնության հասնել վիրավորներին:

Սյունիքի մարզպետի տեղակալները պատվիրակության անդամներին ուղեկցեցին նաև Կապանի Ներքին Հանդ և դեպի Սիսիանի Իշխանասար տանող հատվածներ: Տեղում հյուրերն արձանագրեցին, որ Ներքին Հանդը փաստացիորեն երեք կողմից շրջափակման մեջ է, և կանայք ու երեխաները շարունակում են բնակվել հարևան գյուղում: Այստեղ թշնամու նշանառության տակ է հայտնվել նաև գերեզմանատունը: Արձանագրվել են նաև Կապանի

Սրաշեն, Ճակատեն, Շիկահող, Գորիսի Վերիշեն, Ակներ և Տեղ համայնքի Վաղատուր գյուղերին առնչվող խնդիրներ: Հիշեցնենք, որ Հայաստանի տարածքում եվրոպական քաղաքացիական առաքելություն տեղակայելու համաձայնությունը ձեռք է բերվել հոկտեմբերի սկզբին Պրահայում Հայաստանի, Ադրբեջանի, Ֆրանսիայի և Եվրոպական խորհրդի ղեկավարների հանդիպման ժամանակ:

Աղբյուրը՝ <http://syunik.mtad.am/news/item/2022/10/20/EM/>

19.10.2022 թ.

Տեսչական մարմինը Միսիանում վերսկսում է ծանրաքաշ մեքենաների կշռման գործառույթները

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը հայտարարություն է տարածել Սյունիքի մարզում տրանսպորտային միջոցների կշռման աշխատանքների վերսկսման վերաբերյալ:

Նշվում է, որ սեպտեմբերի 13-ին հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած ռազմական գործողությունների պատճառով ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից կասեցվել էին Սյունիքի մարզի Միսիան համայնքի կշռման անշարժ հենակետի աշխատանքները:

«Հայտնում ենք, որ հոկտեմբերի 20-ից ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը Միսիանի կշռման անշարժ հենակետում վերսկսում է ծանրաքաշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացումը», - ասված է հայտարարության մեջ:

Աղբյուրը՝ <https://www.facebook.com/utfsiib/posts/421238926851920>

17.10.2022

Զանգեզուրի կոմբինատի տնկարանային տնտեսությունը

Հանքարդյունաբերության հսկան՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իր առաջնահերթություններից է համարում շրջակա միջավայրի պահպանությունը, Քաջարան քաղաքի, ազդակիր համայնքների կանաչապատումն ու բարեկարգումը: Վերջին մի քանի տարում այդ միտումն ավելի է խորացել, համենայն դեպս Քաջարանը տարեցտարի ավելի կանաչապատ ու ակնահաճո տեսք է ստանում: Այդ ամենին է միտված ձեռնարկության

տնկարանային տնտեսության հիմնադրումը, որը գտնվում է Կապան-Նորաշենիկ ճանապարհի ձախ կողմում՝ Քաշունի գետի հարևանությամբ:

Հինգ հազար քառակուսի մետր տարածություն է զբաղեցնում տնկարանը, որը նախատեսված է ծառերի, թփերի, ծաղիկների աճեցման համար: Տարիներ առաջ այդտեղ ամայի տարածություն էր, որն ընկերության աշխատակիցների և հատկապես Ռաֆիկ Հովհաննիսյանի ջանքերով, ով տնկարանային տնտեսության և Քաջարան քաղաքի կանաչապատման համակարգողն է, դարձավ բուրաստան:

Ռաֆիկ Հովհաննիսյանն ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը՝ գիտնական-գյուղատնտեսի որակավորմամբ: 1981-ից գյուղատնտեսության ոլորտում տարբեր պաշտոններ է վարել, 2008 թվականից Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում է, 2010-ից ընկերության բնապահպանության բաժնում՝ որպես մասնագետ, չորս տարի հետո՝ 2014-ին, ընկերության աշխատակիցների հետ մեկտեղ հիմնել է ձեռնարկության տնկարանային տնտեսությունը:

Շատ շուտով, թեպետ մեծ դժվարությամբ, տնկարանը դարձել է լավագույներից մեկն իր տեսակային կազմով և բույսերի աճողունակությամբ:

Տնկարան մտնելով՝ մի այլ աշխարհում ես հայտնվում, այդտեղ քիչ հանդիպող ծառատեսակներ են աճում, նաև այնպիսիք, որ մեզանում չեն հանդիպում ու նորություն են՝ ճապոնական սերկևիլ, հուդայածառ, օճառածառ, պիխտա, սպիտակ թխկենի, դեղին ակացիա, արիցիա, սիրիական վարդ և այլն:

Ինչպես տեղեկացնում է տնկարանային տնտեսության ղեկավարը, ոռոգման ջրի խնդիրը հիմնովին լուծված է: Որպեսզի հողը չթունավորվի, տնկարանում պարարտանյութ չեն օգտագործում, նաև սրսկումներ չեն կատարում, ավելի ստույգ՝ միայն սրսկում կատարվում է տերևակերների դեմ պայքարելու նպատակով, քանզի այլ ճանապարհով հնարավոր չէ վնասատուից ազատվել: Տնկարան նաև տեխնիկա չի մտնում, բոլոր աշխատանքները (փխրեցում, քաղհան, առուների քաշելը, ոռոգում և այլն) կատարվում են ձեռքով՝ ութ աշխատակցի միջոցով: Եվ դեռ, ղեկավարության հետ մեկտեղ, խնդիր է դրվել բանվորների թիվն ավելացնել:

- Մայիսից հետո այստեղից տնկի դուրս չի գալիս, որովհետև կաչողականությունը ցածր է լինում՝ 20-30 տոկոս, երեք տարի ծառ ենք աճեցնում, որ հետո չորանա՞. երկրորդ ծառատունկը լինում է հոկտեմբերի վերջից՝ հիմնականում նոյեմբեր ամսին, - մանրամասնում է զրուցակիցս: - Զգույշ պիտի քայլել տնկարանում, այստեղ ամեն

քայլափոխի յուրաքանչյուր տնկի արմատներ է ձգում մայր հողում: Երբ տնկին դառնում է 15-20 սմ, տեղափոխում ենք դպրոցական հողամաս, որտեղ մեկ-երկու տարի մնալուց հետո՝ մեկ մետր 20 սմ, իսկ որոշները երկու մետր հասակ ունենալուց հետո տեղափոխվում են կանաչապատման ենթակա տարածքներ:

37 տեսակի տնկի է աճում այդտեղ, դրանց երկարությունը 25 սմ-ից հասնում է երկու մետրի, որից հետո տեղափոխվում է մշտական գրանցման վայր: Ընդ որում՝ տնկիներ հատկացվում են մարզի համայնքներին, նախևառաջ կոմբինատի ազդակիր բնակավայրերին:

2018 թվականից ի վեր 24 հազար ծառ, թուփ ու տնկի մշտական գրանցում են ստացել, 30 հազարից ավելին սպասում են իրենց վերջնական հանգրվաններին:

Տնկարանային տնտեսությունը նաև անտառվերականգնման աշխատանքներ է կատարում: Քաջարանի մոտակա Սպիտակ ջուր (Սախկարսու) տարածքում 3,7 հեկտար անտառվերականգնման աշխատանքներ են կատարել:

14-16 հազար տնկի պատրաստ է անտառվերականգնման համար. դրանք ավանդական ծառատեսակներ են՝ երկու տեսակի կաղնի, թխկի, հացենի, փռշնի, որոնք մեր տարածաշրջանին բնորոշ են, որոնց սերմերն իրենք են հայթայթում, երբեմն Հայաստանի տարբեր վայրերից:

- Չկա այնպիսի մի ծառատեսակ՝ մեր բնաշխարհին բնորոշ, որ մեզ մոտ չլինի, ասում է գյուղատնտեսը:

Նաև ռեկուլտիվացիայի ենթակա տարածքներում են աշխատանքներ կատարվում. 2,5 հեկտար կորնգան են ցանել, և շատ ընտիր է ստացվել:

Ռաֆիկ Հովհաննիսյանը միևնույն ժամանակ հավելում է, որ իրենց տնտեսությունն ընդլայնելու նպատակով ևս երկու հազար մետր տարածք է հատկացվել, մնում է ցանկապատել ու ոռոգման ջուր անցկացնել:

Հունվարից կսկսեն աշխատանքները նոր հողամասի վրա...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/zangezuri-kombinati-tnkaranayin-tntesutyuny>

14.10.2022 թ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ՆԵՐՔԻՆ ՀԱՆԴ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանն այսօր այցելել է Սյունիք եւ մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանի ուղեկցությամբ այցելել Կապան համայնքի Ներքին Հանդ բնակավայր:

ՄԻՊ-ը հանդիպել է գյուղի բնակիչներին, զրուցել նրանց հետ սեպտեմբերի 13-ից հետո այստեղ ստեղծված իրավիճակի մասին, հետաքրքրվել մարդու իրավունքներին առնչվող հարցերով:

Գյուղացիները Քրիստիննե Գրիգորյանին են ներկայացրել իրենց մտահոգություններն ու առկա կացության հետեւանքով ի հայտ եկած խնդիրները, որոնք առնչվել են անվտանգային, կոմունիկացիոն ու այլ հարցերի, շեշտել, որ չեն կարողանում այցելել գյուղի գերեզմանատուն ու մոտենալ իրենց հողատարածքներին, հետեւաբար եւ՝ գյուղատնտեսությամբ զբաղվել:

Աղբյուրը՝ http://syunik.mtad.am/news/item/2022/10/14/ombuds_visit_Syunik/

14.10.2022 թ.

Սյունիքում շարժական մամոգրաֆ կգործի

Հոկտեմբերի 13-ին Գորիսում կայացած խորհրդակցության ընթացքում ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արմեն Նազարյանը ներկայացրել է Սյունիքում մեկնարկող առողջապահական ծրագրի մանրամասները:

Հանդիպմանը մասնակցել են Սյունիքի մարզպետի տեղակալ Նարե Ղազարյանը, մարզպետարանի Առողջապահության եւ սոցիալական ապահովության վարչության պետ Նունե Գեւորգյանը, մարզի բուժհաստատությունների ղեկավարները, պոլիկլինիկական ծառայությունների պատասխանատուները:

Առողջապահության ոլորտում ներկայումս իրականացվող ծրագրի շրջանակում Սյունիքի, Լոռու եւ Տավուշի մարզերի 50-69 տարեկան կանայք կարող են մամոգրաֆիկ անվճար սքրինինգային հետազոտություն անցնել: Սյունիքում շարժական մամոգրաֆը տեղակայվելու է հոկտեմբերի 24-ից, այնուհետեւ, ըստ ժամանակացույցի՝ նաեւ մարզի մյուս տարածաշրջաններում՝ մինչեւ 2023 թվականի մայիսը:

Երեկ Գորիսում քննարկվել են ծրագրի կարեւորությունը, հնարավորինս կանանց մասնակցության ապահովումը, պատշաճ իրազեկումը, կազմակերպական ու մասնագիտական մի շարք հարցեր:

Ծրագիրը մեկնարկել է 2021թ., Լոռիում ու Տավուշում արդեն իսկ իրականացվել է 14 921 մամոգրաֆիկ անվճար հետազոտություն: Ըստ կարիքի կանայք ուղեգրվել են նաեւ Ուռուցքաբանության ազգային կենտրոնում (ՈԻԱԿ) լրացուցիչ հետազոտությունների, ու

նշենք, որ տվյալ ծրագրի մասնակիցների լրացուցիչ հետազոտությունները եւս ՈԻԱԿ-ի աջակցությամբ անվճար են:

Աղբյուրը՝ <http://syunik.mtad.am/news/item/2022/10/13/mamografia/>

13.10.2022 թ.

Հայոց Սյունիքի անդամահատումը շարունակվում է

2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից մոտ մեկ ամիս անց՝ դեկտեմբերի 18-ին, վերին հրամանով Սյունիքի ուղղությամբ մեր առաջնագծի դիրքերը նվիրվեցին թուրք-ազերիներին:

2021 թ. մայիսի 12-13-ին թուրք-ազերիները ներխուժեցին Սև լճի տարածք և բռնազավթեցին լճի արևելյան հատվածը, ինչպես և Գլուխ Ձագեձորո լեռան բարձունքը, որտեղից դիտարկվում է Գորիսի ամբողջ տարածաշրջանը:

2021-ի նոյեմբերի 16-ին թուրք-ազերիներն ագրեսիա սանձազերծեցին Մեծ և Փոքր Իշխանասարերի հարավարևմտյան ուղղությամբ և ամրապնդվեցին այդ վայրերում:

2021-ի աշնանը շրջափակվեցին Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն մայրուղիները:

Շրջափակվեց Կապան-Եղվարդի ենթաշրջան մայրուղին:

2022-ի մարտին թուրք-ազերիները զավթեցին Ներքին Հանդի մերձակա բարձունքները՝ հարավից և հարավ-արևելքից:

2022-ի սեպտեմբերի 13-15-ին, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի վկայությամբ, ադրբեջանցի զավթիչները նոր տարածքներ զավթեցին Ներքին Հանդի մերձակայքում և Մեծ Իշխանասարում:

Ավելի վաղ ազերիները զավթել են մոտ 300 հա վարելահող՝ Տեղ համայնքին պատկանող:

Հավաստի տեղեկատվություն չկա այն մասին, թե որքան է թշնամին առաջ եկել Գորիսի ամառային արոտավայրերում և Ուխտասարի ու Ծղուկ լեռան տարածքում:

Այդ ամենը գուգորդվել է հայ զինվորականների մահվամբ ու գերեվարությամբ:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/hayots-syuniqi-andamahatumy-sharunakvum-e>

10.10.2022 թ.

Տաթև-Լծեն-Շամբ ճանապարհը կերպարանք է առնում. գլխավոր դերակատարը «ԱԱԲ» պրոյեկտն է

Երկրորդ տարին է՝ Սյունիքի մարզում հաղորդակցության ուղիների նախադեպը չունեցող ցանց է ձևավորվում: Ու եթե այդ ամենը պայմանավորված չլիներ Արցախյան երրորդ պատերազմում մեր կրած պարտությամբ, ապա կարող էինք հիացմունքով ու

հայարտությամբ փաստել՝ Սյունիքում դարակազմիկ գործեր են արվում ճանապարհների կառուցման ուղղությամբ:

Բայց եւ, մյուս կողմից, կա իրողություն՝ ազգովի կանգնած ենք կոնկրետ մարտահրավերների դեմ հանդիման: Ուստի չենք կարող չկարելուրել այն աշխատանքները, որոնք կատարվում են մարզի ճանապարհաշինության ոլորտում:

Ոչ սովորական մեր ժամանակներում Սյունիքում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների գլխավոր դերակատարներից է «ԱԱԲ» պրոյեկտ ընկերությունը:

Ճանապարհաշինական այդ կազմակերպությունը մեր երկրամասում հայտնի է դեռեւս 2019 թվականից: Սատանի կամուրջ-Տաթեւ 6,6 կմ երկարությամբ ճանապարհի՝ բացառիկ որակյալ կառուցումն այդ ընկերության ու նրա թիմի հանդեպ հիմնավոր վստահություն են առաջ բերել: Այդ ճանապարհը, հիրավի, լավագույն օրինակն է, թե ինչպես կարելի է ոչ սովորական ռելիեֆ ունեցող լեռնալանջերով ճանապարհ կառուցել. մոտ չորս տարվա ակտիվ շահագործումից հետո՝ ոչ մի քանդվածք, ասֆալտբետոնե շերտի ոչ մի փոփոխություն:

Ներկայումս «ԱԱԲ» պրոյեկտ ընկերությունը չորս խոշոր ծրագիր է իրականացնում մարզում՝ Տաթեւ-Լձեն ճանապարհի առաջին մասի կամ հարավարեւելյան հատվածի կառուցում, Լաչինի միջանցքի նոր երթուղու՝ Հազարի գետ-Կոռնիձոր-Տեղ ճանապարհի առաջին հատվածի կառուցում, Մ-12-Գորիս-Տեղ ճանապարհի միջին նորոգում եւ Շամբ-Լձեն ճանապարհահատվածի կառուցում:

Վերջին շրջանում հնարավորություն ենք ունեցել ծանոթանալ ընկերության աշխատանքներին Շամբ-Լձեն հատվածում և Լաչինի միջանցքը Սյունիքին կապող նորակառույց ճանապարհին:

Այսօր խոսքը Տաթեւ-Լձեն ճանապարհի շինարարության ընթացքի մասին է:

Հոկտեմբերի 5-ին այցելեցինք Տաթեւ-Լձեն ճանապարհի կառուցման շինհրապարակներ...

Ճանապարհի այդ հատվածի կառուցումը մեզ հետաքրքրում էր մի քանի առումով: Հետաքրքիր էր, օրինակ, թե Կապան-Տաթեւի n^o ը հատվածից է ճանապարհը թեքվելու եւ բարձրանալու սարերն ի վեր՝ դեպի Լձեն:

Եվ կարծեք ուշագրավ լուծում է գտնվել՝ կառուցվող ճանապարհը սկսվում է Տաթևի գյուղի հարավային եզերքով ձգվող ձորից (այդ ձորաբերանի ձախ մասում Տաթևի վանքն է): Եվ ձորն ի վեր ձգվում է դեպի արեւմուտք, ապա՝ հյուսիս-արեւմուտք:

Ձորը, որով անցնում է նորակառույց ճանապարհը, տաթևացիներն անվանում են Ծածարդի ձոր կամ Ճաղացի (Ջրաղացի) ձոր: Այդտեղով է հոսում Գինական գետը, որը Ռոտտանի աջակողմյան վտակներից է, որը Ղեւոնդ Ալիշանը նույնացնում է Տաթևի-ջուր գետին:

Հնում այդ վայրերում նաև Գինական ու Ծածարդ (Ծածարթ) գյուղերն են եղել, երկուսն էլ՝ Տաթևի վանքին հարկատու:

Ուստի և հարց է առաջանում՝ արդյո՞ք կառուցվող ճանապարհն առնչվում է պատմամշակութային որեւէ հնավայրի:

«ԱԱԲ» պրոյեկտ ընկերության տեղամասի պատասխանատու Արմեն Խաչատրյանը պատասխանում է՝ նման խնդիր չկա:

Այդ ձորում նաև Տաթևի բնակիչների սեփական հողատարածքներն են, եւ մոտ 40 ընտանիքի հողամաս մասամբ կամ լրիվ ճանապարհի տակ է ընկել, գյուղացիներն էլ փոխհատուցում են պահանջում կառավարությունից:

- Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի այցի ընթացքում նաև այդ հարցն է քննարկվել,-ասում է Արմեն Խաչատրյանը:-Հողային աշխատանքներն ավարտելուց հետո կկատարվեն համապատասխան գնահատումներ եւ փոխհատուցումը կկատարվի:

Տաթև-Լծեն կառուցվող ճանապարհի երկարությունը մոտ 20 կմ է, որից 10,5 կիլոմետրը կառուցում է «ԱԱԲ» պրոյեկտ ընկերությունը:

Մեր առաջին կանգառն ընկերության՝ Գորիսի տարածաշրջանի Սվարանց գյուղի մոտ խարիսխ ձգած բազան էր: Մի հայացք ձգելով՝ նախևառաջ աչքի է զարնում գերմանական արտադրության՝ ժամում 35 խորանարդ մետր արտադրողականությամբ բետոնախառնիչը: Քիչ այն կողմում հզոր քարջարդիչն է, ճանապարհի հողախառնուրդից դուրս եկած քարերն այդ տեխնիկայի միջոցով մանրացվում են, ստացվում է լավորակ խիճ, որն օգտագործվում է և՛ ճանապարհի ավազակոպձային շերտը տեղադրելիս, և՛ ասֆալտբետոնե ծածկ ստանալու համար: Այդտեղ նաև ջրահեռացման խողովակներ են պատրաստվում: Հետո իմանում ենք, որ

35 վայրում այդպիսի խողովակներ պիտի տեղադրվեն, որպեսզի ջրահեռացում կատարվի նաև ակամա հիշում ենք ճանապարհաշինարարների շրջանում տարածված ձևակերպումը՝ ջուրը ճանապարհի թշնամին է:

Մեզ հանդիպած առաջին ճանապարհաշինարարը Գարեն Առաքելյանն է՝ Տաթև գյուղից. չորրորդ ամիսն է՝ ճանապարհաշինարարությունում է, իր իմացածի չափով մեզ տեղեկություններ է հաղորդում: **«Կամրջի համար սյուներ ենք պատրաստում, նաև ջրահեռացման խողովակներ»**, - ասում է և գոհունակություն հայտնում, ապա սահուն անցնում մաղթանքի. **«Ցանկանում ենք մեր երկրին խաղաղություն. քայլենք կանաչ ճանապարհով, ապրենք խաղաղ երկնքի տակ, պատերազմ չլինի, պայծառ ապագա՝ հայ ժողովրդին»**: Գերքաղաքականացված մեր ժամանակներում բանվոր մարդու անկեղծ մաղթանքը որոշ ոգևորություն է պատճառում: Ինչևէ:

Քիչ հետո մեզ է միանում տեղամասի պատասխանատու Արմեն Խաչատրյանը, ով վեց տարի է՝ «ԱԱԲ» պրոյեկտ ընկերությունում է, որտեղից էլ, ինչպես ինքն է ասում, սկսել է ճանապարհաշինարարական կարիերան: Նրա փոխանցմամբ՝ հարյուրից ավելի մարդ է աշխատում շինարարությունում, 30-ից ավելի տեխնիկա գործում: Աշխատողների 70 տոկոսը տեղացի է, միայն 30 տոկոսը՝ Տաթևից, մյուսները՝ հարակից գյուղերից: Շինարարությունը սկսել են անցած տարվա հոկտեմբերից, բայց այս տարվա փետրվարից, նախագծում փոփոխություններ կատարելու պատճառով, չորս ամիս աշխատանքները դանդաղել են: Աշխատանքները դանդաղել են նաև սեպտեմբերի 13-15-ի հայտնի իրադարձությունների պատճառով:

Հողային աշխատանքներն ավարտական փուլում են, երկու կիլոմետրի վրա երկշերտ ասֆալտ են փռել, ևս մի շերտ պիտի լինի. դա արդեն՝ 2023-ին: Ճանապարհի ասֆալտապատ մասը կունենա 6,6 մետր լայնություն, ոչ պակաս կարևոր են կողնակները (обочина)՝ 1,5 մետր լայնությամբ՝ յուրաքանչյուր կողմից: Տվյալ պահանջը ևս կատարվում է, դեռ մի բան էլ ավելի:

Այդ ամբողջ տեղեկատվությունը ստանում ենք ոտքի վրա, այնուհետև մեքենայով շարժվում ենք նոր կառուցվող ճանապարհով: Տաթևի վանք չհասած՝ թեքվում ենք ձախ, և մեր առջև ճանապարհաշինական տպավորիչ պատկեր է բացվում: Շինտեխնիկան հատել է քարակոփ լեռնալանջը, որի բարձրությունը մոտ 20 մետր է: Հեռվից լսվում է հիդրավիկ մուրճի հարվածների միալար ձայնը: Մեր զրուցակիցը տեղեկացնում է, որ երբեմն մինչև 9-ը աստիճանի գրունտի են հանդիպել: Գործին խանգարում է այն, որ աշխատանքները տվյալ

հատվածում ավարտելուց հետո փլվածքներ են լինում: Իսկ ընդհանուր առմամբ մինչև այժմ մոտ 800 հազար խորանարդ մետր հողային հանույթ են ունեցել:

Տեղ-տեղ անցնում ենք հիմնական ճանապարհին գուգահեռ կառուցված այլընտրանքային ճանապարհով. դեղին փոշու թանձր ամպ է բարձրանում, բայց հասցնում ենք լուսանկարներ անել, որի առիթն անընդհատ լինում է. ճանապարհաշինական նման պատկերների քիչ կհանդիպես:

Արմեն Խաչատրյանը նկատելով մեր հետաքրքրությունը՝ փոխանցում է, որ դժվարությունները ժայռերի հետ են կապված, նաև սողանքային գոտիներ կան, գրունտային ջրեր, որ գործին խանգարում են...

Բարձրադիր տեղանքով անցնող այդ ճանապարհի ամենաբարձր նիշը ծովի մակարդակից 2130 մետր է, ձմռան ամիսներին ճանապարհի փակվելու տխուր հեռանկար կա, այդ կողմերում բքառատ երևույթներն անպակաս են. արդյո՞ք չենք ունենա երկրորդ Սելիմի լեռնանցք, բայց դա խոսակցության այլ թեմա է...

Հասնում ենք Տաթև եւ Լծեն գյուղերի վարչական տարածքների բաժանարար գծին, այն հատվածը, որտեղից սկսվում է հարեւան շինկազմակերպության աշխատանքների սկիզբը, որտեղ արդեն ասֆալտի շերտ է երևում:

Հետդարձի ճանապարհին հանդիպում ենք ընկերության նախագծի ղեկավար Վահրամ Պետրոսյանին: Մասնագիտական կրթություն ունի, Ճարտարապետաշինարարական համալսարանն է ավարտել:

Նա գոհունակություն է արտահայտում ճանապարհի կառուցման ընթացքի վերաբերյալ...

Այնուհետև ցանկանում ենք իմանալ վերը հիշատակված Մատանի կամուրջ-Տաթև ճանապարհահատվածում բարձր որակ ապահովելու «գաղտնիքը»: Դա բացատրվում է, որքանով հասկացանք, խճի լավ որակով, այն խճի, որ ստանում են վերը հիշատակված բազայում՝ հողից դուրս եկած քարերից:

Վահրամ Պետրոսյանը նաև անհրաժեշտ բացատրություններ է տալիս. «**Ընդհանրապես ասֆալտբետոնե ծածկի տեղադրումը նուրբ գործ է, կողքից թվում է՝ տեխնիկան աշխատում է և վերջ: Բայց միայն տեխնիկայի խնդիր չէ, կան մասնագիտական նրբություններ, որ մշտապես նկատի պիտի ունենալ: Դրան հետևում ենք, ինչի շնորհիվ մեզ մոտ լավ է ստացվում:**»

Տեղեկանում ենք, որ ընկերության ասֆալտգործարանը Մ-2-Նորավան խաչմերուկում է՝ Իշխանասարի ստորոտում: Հատկապես վերջին իրադարձություններից հետո այնտեղ աշխատելը բարդացել է, ոչսկային դարձել...

Արդեն նշեցինք կատարված նախագծային փոփոխությունների մասին, որ արվել են շինարարության ընթացքում: Նոր նախագիծ է կազմվել, ինչի հետևանքով բետոնային աշխատանքների ծավալներն են եռապատկվել, բայց շինարարության ավարտի ժամկետը մնացել է նույնը: Մեր գրուցակիցները չեն ասում, բայց կռահում ենք, որ նրանք բացառում են գրոհայնությունն ու շտապողականությունը. **«Հիմա նախագիծը վերջնական է, փորձում ենք դրա բոլոր կետերն իրականացնել: Ավելի լավ է նախատեսված ժամկետից փոքր-ինչ հետ ընկնենք, բայց որակը չաուժի»:**

Այդ համատեքստում նշվում է, որ «Հայճաննախագիծը» է՛լ ճանապարհն է նախագծում, է՛լ հետևում կառուցման որակին:

Վահրամ Պետրոսյանն այնուհետև ճանապարհաշինարարների համար առաջ եկած դժվարությունների մասին է խոսում՝ **«Աշխարհում տեղի ունեցող հայտնի իրադարձությունների հետևանքով է՛լ լոգիստիկ դժվարություններ են առաջ եկել, է՛լ հիմնական շինանյութերի գներն են շեշտակիորեն բարձրացել, նկատի ունեմ հատկապես մագուրը, դիզվառելիքը, ցեմենտը: Դիզվառելիքի գինը, օրինակ, 350-ից հասել է 600 դրամի: Բայց մենք՝ չսպասելով վերահաշվարկների, փոխհատուցումների, չնայելով այդ դժվարություններին, շարունակում ենք աշխատել եւ աշխատանքի տեմպը չխաթարել: Անկեղծորեն՝ այս դեպքում եւ ընդհանրապես սյունիքյան կառույցներում՝ ֆինանսական շահույթից առաջ մեզ հետաքրքրում է երկրի շահը, Սյունիքի մարզի հաղորդակցության ուղիների որակյալ կառուցումը»:**

Մեր շրջագայության ընթացքում քանիցս կանգ առանք շինարարական տարբեր տեղամասերում եւ գրույցներ ունեցանք ճանապարհաշինարարների հետ:

Չեր կարելի չնկատել գլխավորը՝ պատասխանատվության զգացումը, որը, կարծեք, առկա է բոլորի մեջ՝ թիմի ներկայացուցիչներից մինչեւ բանվոր:

Չեր կարելի չնկատել մարդկանց պատրաստակամությունն ու վճռականությունը՝ մայրուղին կառուցել այնպիսի որակով, որ չզիջի Սատանի կամուրջ-Տաթեւ օրինակելի ճանապարհին:

Չէր կարելի չնկատել, որ շինընկերությունը «մարտադաշտ» է դուրս բերել արդիական տեխնիկա եւ, իհարկե, փորձառու մասնագետների մի ամբողջ փաղանգ:

Ստեղծված իրավիճակում, սակայն, չի կարելի բացառել գրոհայնությունը, քանի որ խնդիր է առաջադրված՝ աշխատանքները (ասֆալտբետոնե երկու շերտով) ավարտել առաջիկա մեկ ամսում, այն էլ՝ եղանակային անակնկալներով լեցուն այս օրերին:

Վահրամ Պետրոսյանն ու Արմեն Խաչատրյանը, մինչդեռ, բացառում են գրոհայնությունն ու հապճեպությունը, որը կարող է էականորեն անդրադառնալ ճանապարհի որակին: Եվ ուրեմն՝ նախ որակ, հետո՝ ժամանակացույց: Իսկ տղաների լրջախոհ պահվածքը հավատ է ներշնչում, մնում է, որ վերադաս մարմինները նույնպես հաշվի առնեն ոչ երկրորդական այդ հանգամանքը:

Այդպիսի տպավորությամբ էլ բաժանվեցինք ճանապարհաշինարարներից...

Հ.Գ.1

«ԱԱԲ» պրոյեկտի սյունիքյան կառույցներում լրացուցիչ աշխատողների կարիք է զգացվում՝ մեխանիզատորներ, բետոնագործներ, բանվորներ: Այդ մասին մեզ տեղեկացրեց Վահրամ Պետրոսյանը եւ ցանկացողներին խորհուրդ տվեց հեռաձայնել Գրիգոր Սահակյանին (094-71-81-87) և Պատվական Պետրոսյանին (098-61-66-66):

Հ.Գ.2

Տաթև-Լծեն ճանապարհը, ինչպես նշեցինք, բարձրադիր վայրերով է անցնում եւ ձյունառատ օրերին, անտարակույս, հատուկ խնամք է պահանջելու:

Տարվա մյուս եղանակներին երթուղին, համոզված ենք, գայթակղելու է զբոսաշրջիկներին (դա, իհարկե, մեր երազած լավ օրերին), քանզի այնտեղով անցնելիս հանդիպում ենք մեր լեռնաշխարհի բնության անզուգական գեղեցկությունների նորանոր պատկերների:

Բարձունքից նկատվում է ոչ միայն Տաթևի վանքի Պողոս-Պետրոս տաճարի գմբեթի տիրական ներկայությունը: Երևում են հրաշք Տաթևն ու ոչ պակաս հրաշք Հարժիսը՝ Որոտանի կիրճի պռնկին բազմած: Երևում են Արամազդը, Ադոթարանը, Ուխտասարը եւ, իհարկե, մեր գերված-պատանդված Իշխանասարը...

Եվ սրբազան այդ վայրերին հայացք ձգելով՝ ավելի է ամրապնդում մեր համոզմունքը՝ հայերեն են գալու Սյունյաց աշխարհի վաղվա օրերն ու գալիք դարերը...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/tate%D6%82-ltsen-shamb-chanaparhy-kerparanq-e-arnum-glkhavor-derakatory-aab-proyektn-e>

09.10.2022 թ.

**Շինուհայրի գեղաշեն եկեղեցին՝ Սուրբ Գրիգոր Տաթևացու անունով, օծվեց սրբալույս
մյուռնով**

Հազարամյակների խորքից եկող Շինուհայրում դարերի ընթացքում բազմաթիվ սրբավայրեր են կառուցվել...

Հին գյուղի կենտրոնում Սուրբ Ստեփանոս եռանավ բազիլիկ տաճարն է՝ հիմնադրված դեռևս 4-րդ դարում:

Գյուղի արեւմտյան ծայրին Կուսանաց անապատն է՝ կենտրոնում ունենալով Սուրբ Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 17-րդ դարում:

Գյուղի հարավային ծայրին՝ Որոտան գետի ափին, Շինուհայրի վանքն է, որ նաև Հին եկեղեցի է կոչվում (կառուցման ժամկետը եւ անունը հայտնի չեն):

Հին գյուղի կենտրոնի գերեզմանատանն է իր ձեռով եզակի խաչքարը՝ 1229 կամ 1261-ին կանգնեցված:

Ուրիշ սրբավայրեր էլ կան՝ Բաղուն խաչը, Վնսար եկեղեցու ավերակները, Սուրբ աղբյուրը, որ նաև «Քոսի աղբյուր» է կոչվում, Մատաղասարը (ավազահանքի բլուրը), որի գագաթին 2016-ին գյուղի երիտասարդները երկաթյա խաչ են կանգնեցրել...

Սակայն գյուղը 1960-ականներից սկսած տեղափոխվել է վերելի սարահարթ՝ ներկայիս գյուղատեղի, եւ բնակիչները դժվարությամբ են կարողանում հաղորդակցվել քրիստոնեական այդ սրբավայրերին, ասել է թե՛ հանրապետության ամենախոշոր գյուղերից մեկում՝ Շինուհայրում անհրաժեշտություն էր դարձել տաճարի կառուցումը:

Ներկայիս Շինուհայրում եկեղեցի կառուցելու նախաձեռնության հեղինակը Տաթևի վանքի վանահայր Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանն է:

Կառուցվել է օրինակը չունեցող նախագծով՝ եկեղեցաշինության ազգային եւ սյունիքյան ավանդույթների համադրմամբ (նախագծի հեղինակն ու ճարտարապետն է Աշոտ դպիր Հակոբյանը):

Եկեղեցու հիմնօրհները կամ հիմնարկերը տեղի ունեցավ 2018 թ. մայիսի 17-ին՝ Մայր տաճարի լուսարարապետ Հովնան եպիսկոպոս Հակոբյանի գլխավորությամբ:

Տեղն էլ պատահական չէ ընտրված. այդ վայրում, ըստ Տեր Միքայել վարդապետ Գեւորգյանի, սրբավայր է եղել հնում, որը վկայող խաչքարը պահպանվում է:

Եկեղեցին կառուցվել է հանգանակությամբ եւ նվիրատվությամբ հավաքված դրամական միջոցներով:

Շինարարությունն իրականացնողներից են Գեւորգ Պարոնյանը, Գուրգեն Գեւորգյանը...

Միանավ բազիլիկ եկեղեցին կառուցվեց հինգ տարի շարունակ. երկարությունը 17 մ է, լայնությունը՝ 10 մ, բարձրությունը՝ 11 մ (խաչով՝ 13 մ):

Շարը գորիսյան է (բազալտը՝ Միսիանից, խամ շարի քարերը՝ Շինուհայրից):

Մեկ տարի առաջ է եկեղեցու խաչն օծվել Մայր աթոռ Սուրբ Էջմիածնում, որից հետո էլ տեղադրվել է:

Մեծագույն հաճույքով ենք փաստում հանգամանքը, որ Շինուհայրի նորաշեն եկեղեցին նվիրված է հայկազյան ազգի երկրորդ լուսավորիչ, եռամեծար փիլիսոփա, աստվածաբան ու մեկնիչ, մանկավարժ ու մանրանկարիչ, երաժշտագետ, երիցս երանելի վարդապետ Գրիգորին, ով աշակերտն էր տիեզերահռչակ փիլիսոփա, Տաթևի համալսարանի հիմնադիր եւ մեծն րաբունապետ Հովհան Ռոտունեցու:

Գրիգոր Տաթևացին մահացավ 1409-ի դեկտեմբերի 27-ին՝ Տաթևի վանքում, որտեղ էլ թաղվեց մեծ առաքյալների՝ Պողոսի եւ Պետրոսի տոնին ու հավերժորեն նրանց դասակից ու պատվակից եղավ:

Հոկտեմբերի 8-ն աննախադեպ մարդաշատ էր տոնականությամբ շնչող Շինուհայրում՝ Սուրբ Գրիգոր Տաթևացի եկեղեցու օծումն էր: Մեկ օր առաջ էլ տեղի էր ունեցել եկեղեցու նախատոնակը կամ նավակատիքը:

Հարյուրավոր հավատացյալների մասնակցությամբ եկեղեցին օծեցին Վեհափառ հայրապետի օրհնությամբ եւ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ, գերաշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի ու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Տեր Արտակ եպիսկոպոս Տիգրանյանի ձեռամբ:

Սրբալույս մյուռոնով օծվեցին Սուրբ խորանը, եկեղեցու 16 սյուները:

Այնուհետեւ մատուցվեց Սուրբ պատարագ՝ ձեռամբ Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդական փոխանորդ, հոգեշնորհ Տեր Մակար վարդապետ Հակոբյանի:

Օծման արարողությունը համեմվեց «Տաթևի գանգակներ» երգչախմբի գեղեցիկ կատարումներով:

Շինուհայրում կանգնեցված Աստծո փառքի տունը զարդարվեց Սուրբ Հովհան Որոտնեցու եւ Սուրբ Գրիգոր Տաթևացու մեծադիր գեղանկարներով:

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էր Սյունյաց թեմի ամբողջ հոգևոր դասը:

Ներկա էին նաեւ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանը, Տաթև համայնքի ղեկավար Սամվել Լալայանը, Սյունյաց հոգևոր թեմի աստենապետ Աշոտ Մինասյանը, Շինուհայրի, ինչպես եւ մերձակա գյուղերի բնակիչներ:

Անտարակույս, որեւէ սրբավայրի օծումը նշանակալից իրադարձություն է քրիստոնյաներիս կյանքում: Սակայն Շինուհայրի Սուրբ Գրիգոր Տաթևացի եկեղեցու օծումն ավելի մեծ խորհուրդ ունի, ինչ-որ առումով՝ պատմական նշանակություն...

Մեր օրերում, երբ հայոց հնամենի, բայց բնագավթված հողերում անարգվում եւ պղծվում են քրիստոնեական սրբավայրերը, երբ բազմաթիվ տաճարներ խոնարհված են ու խոնարհվում են, փորձությունների եւ անորոշության մեջ մխրձված Սյունյաց աշխարհի բնակավայրերից մեկում եկեղեցի է կառուցվում եւ օծվում:

Քանիցս ասել ու կրկնում ենք՝ Սյունիքը պատմության արհավիրքներին դիմակայել եւ ծանրագույն վիճակներից հաղթող է դուրս եկել ոչ միայն հայոց քաջագունների արյան գնով ու Սյունյաց հաղթական զենքով, այլ նաեւ հոգևոր-մշակութային ներուժով. դա է եղել հաղթանակների բանաձեւը, որը երբեք չպետք է մոռանալ:

Եվ ուրեմն՝ Շինուհայրի եկեղեցին Աստծո տաճար եւ բնակարան դարձնելով, մենք վերստին հաստատականություն հայտնեցինք՝ հավատարիմ մնալու մեր նախնայաց հիշատակին, նաեւ այն նահատակների հիշատակին, ովքեր Արցախյան առաջին, Ապրիլյան (2016) եւ Արցախյան երրորդ պատերազմներում, ինչպես եւ մեր օրերում իրենց կյանքը չխնայեցին հանուն հայրենիքի ու հանուն հայոց պետականության՝ այդ ամենին արժանավոր տերը լինելու առաքելությունը թողնելով մեզ՝ ողջերիս:

Ուստի վերստին հիշենք՝ մեզ հետ է Աստված եւ Դավիթ Բեկի ու Գարեգին Նժդեհի վրիժակ ոգին:

Սամվել Ալեքսանյան

Հետզոտություն

Շինուհայրի Սուրբ Գրիգոր Տաթևացի եկեղեցու օծման ընթացքում ներկաներից շատերն ավելին էին ուզում իմանալ եկեղեցու օրհնության խորհրդի մասին:

Ուստի եւ պատշաճ ենք համարում ներկայացնել Գրիգոր Տաթևացու պատասխանն այդ կապակցությամբ, որը տեղ է գտել **«Գիրք հարցմանց»** կոթողային գործում (էջ 759-760):

Եվ ուրեմն՝ ինչո՞ւ է օրհնվում եկեղեցին:

«Պատասխան. Բազմաթիւ պատճառներով:

Նախ, որովհետեւ տարրերը հողը, ջուրը եւ այլն, դատապարտուեցին մարդ « Ադամի պատճառով, ըստ այդմ «Անիծեալ լինի երկիրը քո արածի պատճառով»

(Ծննդ. Գ 17), իսկ եկեղեցին նոյն նիւթէ թից է կառուցուում, ուստի աստուածային նոյն խօսքով օրհնում եւ մաքրում ենք առաջին անէծքից:

Երկրորդ՝ որովհետեւ սրա նիւթը արտաքնապէս քարն ու փայտն են, որոնք ոտնակոխ է ն եղել անասունների եւ անբանների կողմից, որի պատճառով էլ օրհնում ենք եւ մաքրում:

Երրորդ՝ որովհետեւ Մովսէսը կանգ նեցնելով օրինակի խորանը - նո խազների արեամբ, ջրով, իւղով օծեց ու մաքրեց այդպէս էլ մենք ճշմարիտը օծում ենք ջրով, գինիով եւ սուրբ միւռոնով:

Չորրորդ՝ որովհետեւ երբ Սողոմոնը կառուցեց տաճարը, աղօթքի կանգնեց, օրհնեց՝ եւ օծեց, ինչպէս Մովսէսը, որի պատճառով տձոյ փառքով լցուեց տաճարը եւ հուր իջաւ գոհաբեր ուրեան ժամանակ: Այս մտքով ենք մենք սեղանի վրայ խունկ ծխում, ինչպէս ասուել է բանմէկ երորդ գլխի՝ քառասուներեքէ ըորդ համարում:

Հինգերորդ՝ եկեղեցին օրհնում ենք, որպէսզի Վերնաստան օրհնութիւնը, որտեղ Տէրը պատարագեց ու Սուրբ Հոգին իջաւ առաքեալների մէջ, այդ նոյն օրհնութիւնը իջնի սուրբ եկեղեցու մէջ:

Վեցերորդ՝ օրհնում ենք, որպէսզի բաժանուի նաեւ այն աշխարհական տներին, որոնք օծուած չեն սրբութեամբ:

Եօթներորդ՝ որովհետեւ Աստուած Սուրբ է, որ բնակուում է Տաճարում, ուստի եւ եկեղեցին պէտք է սրբուի լինելու Սուրբ Աստծոյ տաճար, «որովհետեւ Տէրն իր սուրբ տաճարում է» (Սղմ. Ժ 5):

Ութերորդ՝ եկեղեցին օրհնում ենք, որ լինի Սրբութեան սրբոց, որպէսզի նրան մօտեցողները մաքրուեն:

Իններորդ՝ օրհնում ենք, որովհետեւ նրա բնակիչները եւ պաշտօնեաները պէտք է մաքրուր լինեն, որպէսզի չպղծեն սրբութիւնը:

Տասներորդի՝ օրհնում ենք եւ օծում եկեղեցին մեր օրինակով, որովհետեւ ք մենք էլ եկեղեցի ենք կոչւում, ինչպէս վերն ասացինք:

Արդ ջուրը, գինին եւ միւռնը ցոյց են տալիս սուրբ աւագանի ջուրը եւ միւռնով օծում եւ կնքւում ենք, ապա մեղսաքաւիչ արեան Ճաշակմամբ մաքրում:

Նաեւ խոստովանութեան ջրով մաքրում ենք. թողութեան գինով զմայլւում, շնորհների իւղով զուարթա նում եւ լուսաւորում:

Այս խորհուրդներն ունի եկեղեցու օրհնութիւնը: Իսկ այն, որ պղծուած տաճարում ժամ երգութիւն ենք կատարում, կամ տեղաշարժ եղած սեղանն ենք հաստատում, լպատճառն այն է՝ որ երբ մեր սրբութիւնը որեւէ մեղքով ապա = կանում է կամ շեղում ենք հաւատից, նորից կարող ենք հաստատուել հաւատի : մէջ, դարձեալ կրկնել խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը, որպէսզի առաջին : սրբութեան նման Աստուծոյ Հոգու տաճար եւ բնակարան լինի»:

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/shinuhayri-gekhashen-ekekhetzin-surb-grigortate%D6%82atsu-anunov-otsvets-srbaluys-myuronov>

06.10.2022 թ.

ՍՅՈՒՆԻՔ ԵՆ ԱՅՅԵԼԵԼ ՀՀ-ՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՆ ՈՒ ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ

Հոկտեմբերի 5-

ին Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Գորիսում հանդիպել է Սյունիք այցելած՝ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Անն Լույոյին ու ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Քրիստիննե Գրիգորյանին: Հանդիպմանը մասնակցում էր նաև Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել այցի համար ու ներկայացրել Ադրբեջանի սանձազերծած սեպտեմբերյան լայնածավալ ագրեսիայի հետևանքով մարզում ստեղծված իրավիճակը:

Դեսպանը նշել է, որ համատեղ այցով միացել է Մարդու իրավունքների պաշտպանի թիմին՝ ցույց տալու իր երկրի աջակցությունը Սյունիքին. «Ուզում եմ ասել, որ Ֆրանսիան լայնորեն աջակցում է Հայաստանին ու նրա ջանքերին՝ հաստատելու խաղաղություն երկրում ու տարածաշրջանում»:

Ռոբերտ Ղուկասյանը հյուրերի հետ խոսել է մարզում պատերազմական վիճակի համատեքստում առաջ եկած խնդիրների մասին, քննարկվել են հրետակոծության

հետևանքներին, անվտանգային, կրթական, առողջապահական հարցերին, ենթակառուցվածքներին ու մարզի կարիքներին առնչվող թեմաներ:

Քրիստիննե Գրիգորյանը նույնպես շնորհակալություն է հայտնել դեսպանին, որ եկել է Սյունիք՝ սեփական աչքերով տեսնելու իրողությունները, իսկ նրա ներկայությունը տեղի բնակիչներին թույլ է տալիս զգալու Ֆրանսիայի աջակցությունը:

Անն Լույոն կարևորել է նաև Սյունիքի մարզի ու Ֆրանսիայի Օվերնյ-Ռոն-Ալպ շրջանի միջև նախատեսված համագործակցությունը, որի համար գործնական հիմքեր ստեղծելու ուղղությամբ ներկայումս աշխատանքներ են տարվում. մարզպետի հետ քննարկվել են առաջիկայում մեկնարկող համագործակցության հնարավոր ուղղությունները:

«Պարտավոր ենք աջակցել, առհասարակ, ՀՀ բոլոր մարզերին, բայց ես խորհուրդ եմ տվել շեշտել հատկապես Սյունիքը, որովհետև նրա ներկայիս մարտահրավերներն առանձնահատուկ են», - ասաց դեսպանը:

Հյուրերն այցելել են նաև Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Ֆրանսիայի դեսպանը եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մարզպետի ու համայնքի ղեկավարի ուղեկցությամբ այցելել են նաև հրետակոծությունից տուժած բնակելի տներ, տեսակցել գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում վիրավորված Գորիսի խաղաղ բնակչի, որն այժմ տանը շարունակում է բուժումը:

Աղբյուրը՝

http://syunik.mtad.am/news/item/2022/10/06/ambassador_France_and_ombudspers/

04.10.2022 թ.

Լաչինի միջանցքի նոր երթուղու Հազարի գետ-Կոռնիձոր-Տեղ կառուցվող հատվածում էինք...

Հոկտեմբերի 1-ին «Սյունյաց երկրի» ստեղծագործական խումբը Լաչինի միջանցքի նոր երթուղու Հազարի գետ-Կոռնիձոր-Տեղ հատվածում էր:

Անկեղծ լինենք՝ հնարավոր չէ այդ վայրերում շրջագայել՝ առանց ցավի ու թախծի: Կարծեք՝ վերջին 30 տարին չեն եղել մեր կյանքում և մեր պատմության մեջ: Եվ միանգամայն նոր իրականության մեջ ենք. մեր բարձունքներից հնարավոր չէ չտեսնել ադրբեջանցիների շինարարական եռուզեռը ե՛ւ Լաչինի մերձակայքում, ե՛ւ Հազարի գետի ավազանում... Գորիս-Ստեփանակերտ մայրուղին, որի կառուցման վկաներն ենք, ինչ-որ մի կետում (չհասած Աղավնո) այլևս փակ է ՌԴ խաղաղադապահների կողմից: Իսկ ներքևում Աղավնոն է՝ որբացած, հայի խոսքին ու քայլքին կարոտ:

Այդ վայրերում իրավիճակը չէր փոխվել նույնիսկ 2020 թ. նոյեմբերի 9-ից հետո, հիմա է փոխվում: Դա երևում է նաև սահմանագծի երկարությամբ փոփոխված դաշտերից, որ վաղուց պետք է ցանված լինեին, մինչդեռ...

Թե ինչո՞ւ է Լաչինի միջանցքի երթուղին հենց հիմա փոխվել, այն էլ՝ հակառակ հայտնի եռակողմ հայտարարության դրույթների՝ բավականին քննարկված հարց է, և նպատակ չունենք վերստին անդրադառնալ դրան:

Իսկ ինչո՞ւ է նոր ճանապարհի համար ընտրվել Հազարի գետ-Կոռնիձոր-Տեղ երթուղին:

Այդ հարցը քննարկվում է Սյունիքում և մասնավորապես Գորիսի տարածաշրջանում:

Կարծիքները բազմազան են, բայց ահա կոռնիձորցի Արկադի Խաչատրյանը, ով գյուղի պատմությանը քաջատեղյակ անձնավորություն է, մեզ տեղեկացնում է՝ «**Հնում նույնպես Քաշաթաղը, Արցախը Գորիսի տարածաշրջանի հետ կապված են եղել այդ վայրերով անցնող ճանապարհներով: Իսկ Հազարի գետի վրա աղբբեջանցիների կառուցած կամրջից մոտ 50-100 մ վերև նախկինում կամուրջ է եղել, որը ժամանակին գետը քշել-տարել է: Կոռնիձորից դեպի Հազարի գետ ներկայումս կառուցվող ճանապարհը մեծամասամբ համընկնում է այն տեղերին, որտեղով խորհրդային տարիներին անցնում էր Կոռնիձորի կոլտնտեսության՝ այգիներ տանող ճանապարհը:**

Այդ հատվածում հայ-աղբբեջանական սահմանը, դեռևս խորհրդային ժամանակներից, համարվում է Հազարի գետը, որը մատենագիտության մեջ հիշատակվում է նաև Աղավնո, Հաքարլու, Հաքառու գետ և այլ անվանումներով: Այն Արաքսի ձախակողմյան վտակն է, որ առաջանում է երեք ճյուղերի միախառնումից: Ստորին հոսանքում (աջից) գետի մեջ է թափվում Որոտանը:

Լաչինի միջանցքի նոր երթուղի կատարած այցելության ընթացքում բազմաթիվ տպավորություններ ստացանք, որոնցից երկուսը կուզենայինք առանձնացնել:

Կառուցվող ճանապարհը՝ հատկապես 2-րդ և 3-րդ հատվածներում (Կոռնիձոր գյուղից մինչև Հազարի գետի կամուրջ), բավականին դժվար տեղերով է անցնում՝ կտրուկ վերելքներ ու վայրէջքներ, թեքություններ, որոնք անվտանգ դարձնելու համար ոլորանների շատություն է ենթադրվում (ծովի մակերևույթից 1160 մ բարձրությունից ճանապարհը իջնում է մինչև 850 մ):

Երկրորդ՝ այդ ճանապարհի հողային աշխատանքներում ներգրավված տեխնիկան բանեցնում են փորձառու մասնագետներ, ավելի ճիշտ՝ «վիրտուոզներ», այլապես հնարավոր չէր լինի հողային աշխատանքներ կատարել այդպիսի թեքությունների վրա:

Հագարի գետ-Կոռնիձոր-Տեղ կառուցվող ճանապարհը բաժանված է շինարարական երեք տեղամասի. 1-ին տեղամասը (0-ից 4-րդ կմ) կառուցում է «ԱԱԲ կոնստրուկցիա» ՍՊԸ-ն, 2-րդ հատվածը (4-ից 9-րդ կմ)՝ «Քարավան» ՍՊԸ-ն, 3-րդ հատվածը (9-ից 11,8-րդ կմ)՝ «Ճանապարհ» ՍՊԸ-ն:

Լաչինի միջանցքի նոր երթուղու նշված հատվածը սկսում է Տեղ գյուղի արևելյան վերջնամասից: Մոտ 1,5 կմ ձգվելուց հետո միանում է Տեղ- Կոռնիձոր ասֆալտապատ ճանապարհին, որը, բնականաբար, կընդլայնվի և նոր չափանիշներով կվերակառուցվի:

Կոռնիձոր գյուղի մուտքից ճանապարհը թեքվում է հարավ-արևելք. այդ երթուղին այնուհետև միախառնվում է գյուղից դեպի այգիներ ձգվող ճանապարհին: Եվ այդպես՝ արդեն նոր ոլորաններով իջնում է ձորը, որտեղ միանում է Հագարիի վրա կառուցված կամրջին ու դեպի Ստեփանակերտ ձգվող ճանապարհին:

Մի կարևոր հանգամանք՝ կամրջից մինչև Տեղ գյուղ կառուցվող ճանապարհն ամբողջապես անցնում է մեր տարածքով (ի տարբերություն ներկայումս գործողի):

Ճանապարհը, որքանով տեսանք, կառուցվում է ակտիվ տեմպերով, ճանապարհաշինական մեծաքանակ ու արդիական տեխնիկայի ներգրավմամբ և նորանոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

Եթե շինարարության 2-րդ և 3-րդ տեղամասերում դեռևս հողային աշխատանքներ են ընթանում, ապա մի փոքր այլ է 1-ին տեղամասում կատարվող աշխատանքների նկարագիրը, որը ներկայացրեց «ԱԱԲ կոնստրուկցիա» ընկերության տեղամասի պետ Տարոն Մովսիսյանը. «Օգոստոսի 4-ին ենք սկսել աշխատանքները: Հողային աշխատանքները մոտենում են ավարտին: Կատարվել և կատարվում են երկայնական խողովակների տեղադրման աշխատանքներ: Այսօրվանից իրականացնում ենք ավազակոպճային 10 սմ հաստության շերտի տեղադրում: Ամենայն հավանականությամբ՝ մեկ ամսից երթևեկելի կլինի ճանապարհը՝ գրունտային տարբերակով»:

Կհասցնե՞ն առաջիկա նոյեմբերին ավարտել հողային աշխատանքները, իսկ 2023-ի ապրիլի 25-ին՝ ասֆալտապատումն ու կահավորումը, ինչպես նախատեսված է:

- Դա այն ծրագիրը չէ, որի կատարումը կարող է ձգձգվել, դա պետական ու միջպետական նշանակության ճանապարհ է, որի կառուցումը պիտի ավարտենք սահմանված

Ժամկետում, այն էլ՝ բարձր որակով,- հավաստիացնում է ճանաչված շինարար, «Ճանապարհ»

ՍՊ ընկերության տնօրեն Էդուարդ Բեգոյանը:

Իսկ մինչ այդ ո՞ր ճանապարհով է իրականացվում և իրականացվելու երթևեկությունը Հազարիի կամրջից մինչև Տեղ գյուղ:

Արցախի Հանրապետություն մեկնելու համար Տեղ գյուղից շարունակում ենք ընթանալ երբեմնի Գորիս-Ստեփանակերտ մայրուղով: Չհասած Աղավն, Փոքր Յագ անվանյալ վայրում մայրուղուց թեքվում ենք աջ՝ հարավ-արևելք և 6-7 կմ անցնելուց հետո հասնում նորակառույց կամրջին՝ միջանցքի նոր երթուղուն:

Դա նոր ճանապարհահատված է՝ կառուցված վերջերս՝ ադրբեջանցիների կողմից, որն անցնում է մերթ մեր, մերթ Ադրբեջանի տարածքով: Ու թեև այդ ճանապարհը ժամանակավոր է, բայց ասֆալտապատ է, բարեկարգված, կահավորված: Հիմա էլ այնտեղ կահավորման աշխատանքներ են կատարվում, չնայած այնքան էլ հասկանալի չէ՝ մերո՞նք են աշխատողները, թե՞ ադրբեջանցիները:

Ժամանակավոր այդ ճանապարհահատվածն անցնում է կտրուկ վերելքներով ու վայրէջքներով, որը, բնականաբար, առանձնահատուկ խնամքի կարիք է ունենալու առաջիկա ձմռանը՝ անվտանգ երթևեկությունն ապահովելու համար:

Անշուշտ, չափազանց հետաքրքիր է անվտանգության համակարգը նոր երթուղում: Ներկայումս գործող ճանապարհահատվածում (Տեղ գյուղից մինչև Հազարիի կամուրջ) ՌԴ խաղաղապահների առնավազն երկու անցակետ կա, որտեղ ստուգում են երթևեկող քաղաքացիների անձնագրերը: Առաջինը մայրուղու՝ Տեղ գյուղի Շպկի կոչվող դաշտամասով անցնող հատվածում է, երկրորդը՝ կամրջի մոտ:

Հազարի գետ-Կոռնիձոր-Տեղ կառուցվող ճանապարհը զուտ շինաշխատանքներից դուրս այլ հարցերի տեղիք է տվել: Մանավանդ Կոռնիձորի բնակիչներից շատերի սեփական հողերը ճանապարհի տակ են հայտնվել: Կոռնիձոր գյուղի բնակիչ Արթուր Գրիգորյանը, օրինակ, մտահոգություն է հայտնում, որ կառուցվող ճանապարհը վնաս է հասցնում սեփական վարելահողերին: Ընդ որում՝ ճանապարհի առանձին հատվածների երթուղիները հայտնի են դարձել աշնանացանը կատարելուց հետո: Իսկ փոխհատուցում դեռևս չի կատարվել:

Արթուր Գրիգորյանի կարծիքով՝ չափազանց ռիսկային է դարձել Հագարու ձորի սեփական այգիների մշակումը, իսկ այգիները Կոռնիձորում եկամտի գլխավոր աղբյուր են եղել դարեր շարունակ:

Տեղ համայնքի ղեկավար Դավիթ Ղուլունցը հավաստիացնում է, որ սեփական հողերի օգտագործման դիմաց փոխհատուցումը շուտով կկատարվի՝ և այդ առումով հարցեր չեն լինի:

Ըստ Դավիթ Ղուլունցի՝ շինարարության 2-րդ տեղամասում՝ Կոռնիձոր գյուղի մերձակայքով անցնող հատվածում նախագծային խնդիրներ կան, որոնք պետք է քննարկել գյուղի բնակիչների հետ:

Ստեղծված իրավիճակում, այդուհանդերձ, Տեղի համայնքապետի տեղակալ Արամ Միրզոյանի կարծիքով՝ սահմանին անվտանգության նոր համակարգի ձևավորման խնդիր կա, ինչով նաև համայնքային իշխանությունն է զբաղված:

Ուրախացնող, նույնիսկ ոգևորող էր հանգամանքը, որ Կոռնիձորի դաշտերում աշնանացանի բուռն աշխատանքներ էին կատարվում...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/lachini-mijantsqi-nor-ertukhu-hagari-get-kornidzor-tekh-karutsvokh-hatvatsum-einq>

01.10.2022 թ.

Ի՞նչ ճակատագիր կունենա Սյունիքի եւ Արցախի սահմանագլխին կանգնեցված «Մեծ եւ Փոքր Սյունիքներ» հուշակոթողը

2023 թ. ապրիլին, երբ արդեն Լաչինի միջանցքի նոր երթուղու արեւմտյան հատվածը (Կոռնիձոր եւ Տեղ գյուղերով անցնող) ամբողջապես կգործարկվի, գործող երթուղու մնացյալ հատվածը նույնպես կանցնի Ադրբեջանի տիրապետության ներքո...

Ադրբեջանին կանցնի նաեւ այս հուշակոթողը, որը խորհրդանշում է Մեծ եւ Փոքր Սյունիքների, ասել է թե՛ Սյունիքի եւ Արցախի ճակատագրերի միասնությունը:

2007-ին կառուցված հուշակոթողը նաեւ Արցախյան առաջին պատերազմում նահատակված մեր քաջորդիների հիշատակը երիցս հավերժացնելուն միտված քայլ էր:

Ճարտարապետ Սեւադա Զաքարյանի եւ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության միջոցներով (գլխավոր տնօրեն՝ Մաքսիմ Հակոբյան) կառուցված այդ կոթողով էր սկսվում Արցախի Հանրապետությունը...

Որեւէ կասկած չկա, որ ադրբեջանցի վանդալները (տարածքն իրենց վերահսկողության տակ անցնելուց հետո) առաջին իսկ ժամերին կփորձեն ոչնչացնել հուշակոթողը:

Ի՞նչ անել:

Հուշակոթողն ապամոնտաժել եւ տեղափոխել Սյունիքի մարզի տարածք՝ հնարավոր չէ: Մեւադա Ջաքարյանի կարծիքով՝ ապամոնտաժելուց հետո քարերը կդառնան անօգտագործելի, ինչը թույլ չի տա նախկին տեսքով վերականգնել հուշարձանը: Տեղափոխել կարելի է (եւ անհրաժեշտ է) միայն կողքի խաչքարը: Իսկ հուշարձանը... Պետք է այժմվանից աշխատանքներ տանել, որ այն նույնպես ներառվի ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պահպանվող պատմամշակութային հուշարձանների ցանկի մեջ, որը շատ թե քիչ հույս կներշնչի: Հակառակ պարագայում ցավով պիտի հաշտվենք դրա կորստյան հետ եւս...

Աղբյուրը՝ <https://syuniacyerkir.am/inch-chakatagir-kunena-syuniqi-e%D6%82-artsakhi-sahmanaglkhin-kangnetsvats-mets-e%D6%82-poqr-syuniqner-hushakotokhy>

Կազմող՝ Ս. Ալավերդյան